

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն-----	2
2. Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման միտումների վերլուծություն-----	2
3. Տարածքային զարգացման քաղաքականության միջազգային փորձի նկարագրություն-----	8
4. Տարածքային զարգացման նպատակները-----	9
5. Տարածքային զարգացման խնդիրները-----	10
6. Տարածքային զարգացման հիմնական ուղղությունները-----	10
7. Տարածքային զարգացման և գործիքները-----	12
8. Միջազգային համագործակցության ամրապնդում-----	13
9. Տարածքային զարգացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգի բարելավում-----	14
Հավելված 1-----	15
Հավելված 2-----	25
Հավելված 3-----	32

**1. Ներածություն**

1) Տարածքային զարգացման անհամաչափություններն այս կամ այն չափով բնորոշ են բոլոր երկրներին: Դրանք պայմանավորված են աշխարհագրական, բնակլիմայական, ժողովրդագրական և տնտեսական զարգացման վրա ազդեցություն ունեցող այլ գործոններով: Տարածքային զարգացման անհամաչափությունների խորացումը բնորոշ է հատկապես զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներին: Զարգացման այս փուլում մեր երկրի համար հատկապես կարևորվում է այնպիսի քաղաքականության մշակումն ու կիրառումը, որը ոչ միայն չի խորացնում զարգացման անհամաչափությունները, այլ նաև տարածքների համաչափ զարգացում է ապահովում:

2) Տարածքային զարգացման անհամաչափությունները Հայաստանի Հանրապետությունում սկսել են խորանալ տնտեսական աճի արագացմանը զուգընթաց՝ 2000 թվականից, և հիմնականում արտահայտվում են մայրաքաղաք Երևանի տնտեսական դերի և նշանակության աճով, որի արդյունքում կենսամակարդակի տարբերությունը Երևանի և Հայաստանի Հանրապետության մարզերի միջև անընդհատ աճել է: Մեծ են նաև անհամաչափությունները մարզերի միջև: Երկարաժամկետ ապագայում, տարածքային մեծ և, առավել ևս, խորացող անհամաչափությունները կարող են ուղղակիորեն և անուղղակիորեն բացասաբար անդրադառնալ երկրի ընդհանուր տնտեսական զարգացման վրա: Մասնավորապես՝ անհամաչափ տարածքային զարգացումը նպաստում է տնտեսապես թույլ զարգացած տարածաշրջաններից բնակչության անցանկալի արտահոսքին ու քաղաքային համայնքներում, հատկապես՝ Երևանում կենտրոնացմանը:

**2. Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման միտումների վերլուծություն**

3) Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները, հետևաբար սույն Հայեցակարգում <տարածք> հասկացությունը, համարժեք է մարզի, համայնքի և համայնքների խմբերի հետ:

4) Տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհավասարությունները որպես կանոն բնութագրվում են դրանց տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշներով և աղքատության մակարդակով:

5) Տնտեսական ցուցանիշներից տարածքային միավորների բնութագրիչներից է Համախառն ներքին արդյունքը (այսուհետ՝ ՀՆԱ) տարածքային կտրվածքով: Պետք է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունում տարածքային կտրվածքով ՀՆԱ-ներ չեն հաշվարկվում: Պաշտոնական վիճակագրությունը հրապարակում է տնտեսական որոշ ցուցանիշներ, որոնց ամբողջությունը կարող է մոտարկել ՀՆԱ-ի ցուցանիշի տարածքային մակարդակները: Այդ ցուցանիշների կազմում հատկապես կարևորվում են արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների ցուցանիշները:

6) Պաշտոնական վիճակագրությունը Հայաստանի Հանրապետությունում տնտեսական զարգացումը գնահատելու համար օգտագործում է ՀՆԱ-ի ցուցանիշը, իսկ աղքատության (բարեկեցության) մակարդակը գնահատելու համար օգտագործում է անհատի կողմից սպառման ցուցանիշը: Սպառման ցուցանիշը հաշվարկվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի ընտրանքային հետազոտությամբ ստացված տվյալների հիման վրա:

7) Արդյունքում աղքատությունը գնահատվում է աղքատների ընդհանուր թվաքանակի համաթվով, որն իրենից ներկայացնում է մեկ չափահաս անդամի հաշվով աղքատության գծից ցածր սպառում ունեցող մարդկանց թիվը:

8) Հայաստանում տարածքային կտրվածքով առկա տվյալների հիման վրա վերլուծվել են տարածքային զարգացման անհամամասնությունները՝ դրանք բնութագրող ցուցանիշների միջոցով (մանրամասն տես Հավելված 1):

9) Չնայած Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրի 9-րդ բաժնով նախատեսված տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության բարելավման միջոցառումների շրջանակներում, ինչպես նաև միջազգային ֆինանսական և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացվող մի շարք մարզային և տարածքային զարգացման ծրագրերին, աղյուսակներ 1-ի և 2-ի և Հավելված 1-ի աղյուսակների տվյալները վկայում են ոչ միայն Երևան քաղաքի և մարզերի, այլ նաև մարզերի միջև առկա տարածքային զարգացման անհամաչափությունների մասին: Նշված խնդիրներն ուսումնասիրելու և դրանց լուծումների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար սույն հայեցակարգի մշակման և ընդունման մասին դրույթ ներառվեց Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թվականի մայիսի 6-ի «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-68-Ա կարգադրության մեջ (15-րդ կետ):

10) Աղքատության մակարդակը և տնտեսական ցուցանիշների, մասնավորապես՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության ոլորտներում մեկ շնչին ընկնող արդյունքի ծավալի ցուցանիշները նույն պատկերը և միտումները չունեն: Օրինակ՝ Վայոց Ձորի մարզը ունի ամենացածր աղքատության մակարդակը (աղյուսակ 2), մինչդեռ ըստ տնտեսական ցուցանիշների՝ արդյունաբերական արտադրանքի, գյուղատնտեսության, շինարարության գումարը մեկ շնչի հաշվով, ամենափոքրերից են:

	Աղքատության մակարդակ (%)	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի գումարը	Մեկ շնչի հաշվով գյուղատնտեսության բնագավառում պետական ներդրումները	Մեկ շնչի հաշվով Կապիտալ պետական ներդրումները	Մեկ շնչի հաշվով ենթակառուցվածքների բնագավառում պետական ներդրումները
Երևան	19.7	1630.1	1274.4	818.3	
Արագածոտն	20.7	563.4	5202.9	3562.4	60514.7
Արարատ	24.9	557.1	6485.3	2074.9	34000.8
Արմավիր	26.7	523.7	8779.1	2405.7	46357.5
Գեղարքունիք	24.8	552.8	1884.9	3435.6	39489.7
Լոռի	25.1	625.1	1844.9	2459.6	28187.4
Կոտայք	29.5	576.8	1892.3	6260.3	13320.1
Շիրակ	30.6	416.9	1768.1	2821.8	10243.5
Սյունիք	20.3	1425.6	3452.8	5795.4	53670.0
Վայոց Ձոր	21.1	1078.1	4916.3	4257.7	65938.5
Տավուշ	19.8	328.4	1678.8	1683.2	41493.1
Ընդամենը	23.5	980.4	2906.9	2448.2	35002.5

Աղյուսակ 1

2010 թվականի պետական բյուջեի միջոցներով 1 շնչի հաշվով իրականացված ներդրումները ըստ մարզերի (հազ դրամ)

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ձևավորող ցուցանիշների արժեքները 2009 թվականի դրությամբ

	Արքատուրության մակարանակ (%)	ՀՆԱ-ի գումարը հազար դրամ	Չինարարության գումարը հազար դրամ	արդյունաբերական արտադրանքի գումարը հազար դրամ	գյուղատնտեսական արտադրանքի գումարը հազար դրամ	մանրածախ առևտրի շրջանառության գումարը հազար դրամ	նատուցված ծառայությունների գումարը հազար դրամ
Երևան	19.7	1630.1	353.3	269.1	4.5	789.1	625.2
Արագածոտն	20.7	563.4	52.3	85.2	386.4	67.3	24.9
Արարատ	24.9	557.1	64.1	206.4	320.3	91.6	27.5
Արմավիր	26.7	523.7	36.5	118.3	385.1	124.3	22.0
Գեղարքունիք	24.8	552.8	79.2	50.4	392.2	59.9	21.1
Լոռի	25.1	625.1	51.8	156.4	132.4	78.5	36.3
Կոտայք	29.5	576.8	116.6	287.6	142.7	131.4	50.5
Շիրակ	30.6	416.9	159.7	63.5	200.4	87.3	51.8
Սյունիք	20.3	1425.6	145.1	623.6	221.1	69.3	36.9
Վայոց Ձոր	21.1	1078.1	88.5	111.6	206.1	76.1	34.9
Տավուշ	19.8	328.4	61.5	38.3	181.8	97.1	25.9
Ընդամենը	23.5	956.6	177.5	204.7	171.3	331.4	237.0

11) Նշված տարբերությունները վկայում են, որ աղքատության մակարդակը բնութագրող և տնտեսական ցուցանիշների հարաբերություններն ըստ տարածքների նույն կապվածությունը չունեն: Արդյունքում ոչ միշտ է հնարավոր հաշվարկել տնտեսական զարգացման ցուցանիշների փոփոխության ազդեցությունը աղքատության մակարդակի վրա: Այս փաստը բացատրվում է նրանով, որ աղքատության մակարդակը հաշվարկվում է սպառողական ծախսերի միջոցով:

12) Մարդկանց կենսամակարդակը, կյանքի բարեկեցությունը բարձրացնելու և տարածքներում տնտեսական զարգացում ապահովելու նպատակով պետության կողմից սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների ոլորտում իրականացվող ներդրումները մարդկանց սպառողական ծախսերի վրա անմիջապես չեն ազդում: Հետևաբար տարածքներում աղքատության հաշվարկի հիմքում առաջարկվում է դնել ոչ թե անհատի սպառումը, այլ Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից որդեգրված մարդկային զարգացման սկզբունքները (տես՝ Միավորված Ազգերի Կազմակերպության մարդկային զարգացման հայեցակարգի 2010 թվականի հաշվետվություն (ինտերնետային հասցե՝ [http://www.un.org/ru/development/hdr/2010/hdr\\_2010\\_complete.pdf](http://www.un.org/ru/development/hdr/2010/hdr_2010_complete.pdf)): Այդ սկզբունքներն են մարդկանց՝ տվյալ տարածքում բարեկեցիկ կյանքի, կրթական, առողջապահական որոշակի մակարդակի ապահովումը (մարդկային աղքատություն) և գործազրկության նվազումը (եկամտային աղքատություն): Նշված սկզբունքների կիրառումը հնարավորություն կտա հաշվարկել տնտեսական զարգացման ցուցանիշների մասնավորապես՝ ներդրումների ազդեցությունը աղքատության մակարդակի վրա: Իսկ քանի որ պաշտոնական վիճակագրությունը Հայաստանի Հանրապետությունում տարածքային կտրվածքով ՀՆԱ չի հաշվարկում, ապա առաջարկվում է գնահատել տարածքային կտրվածքով համապատասխան ոլորտներում կատարված ներդրումների ազդեցության չափը տարածքներում ստեղծված ավելացված արդյունքի վրա:

13) Տարածքային զարգացման միտումները վերջին տարիներին բնութագրող մի քանի այլ ցուցանիշներ բերված են ստորև.

Աղյուսակ 3

Երևան քաղաքում և մարզերում պետական բյուջեի միջոցներով իրականացված կապիտալ ներդրումները՝ տոկոսային արտահայտությամբ.

	Երևան (%)			Մարզեր՝ ընդամենը (%)		
	2008	2009	2010	2008	2009	2010
ԸՆԴԱՄԵՆԸ	29.5	19.5	11.5	70.5	80.5	88.5
Կրթական օբյեկտներ	26.9	21.3	12.3	73.1	78.7	87.7
Մշակութային օբյեկտներ	33.2	15.9	3.2	66.8	84.1	96.8
Առողջապահական օբյեկտներ	12.5	7.3	0.0	87.5	92.7	100.0
Մարզական օբյեկտներ	45.4	54.6	47.6	54.6	45.4	52.4

2008-2010 թվականներին Հայաստանի Հանրապետությունում պետական բյուջեի միջոցներով իրականացված ներդրումներն ըստ մարզերի (հազար դրամ)

	Երևան			Մարզերի ընդամենը			Մարզերի և Երևան քաղաքի տարբերությունը		
	2008	2009	2010	2008	2009	2010	2008	2009	2010
ԸՆԴԱՄԵՆԸ	6657980.1	3665223.7	909359.0	15910482.4	15143705.4	7017902.1	9252502.3	11478481.7	6108543.1
Կրթական օբյեկտներ	4669817.6	2972217.9	670246.9	12692641.2	10967860.4	4778641.8	8022823.6	7995642.4	4108394.9
Մշակույթային օբյեկտներ	675869.1	319186.5	42007.6	1358889.2	1689863.0	1252955.8	683020.1	1370676.5	1210948.2
Առողջապահական օբյեկտներ	48919.1	183341.2	0.0	341161.0	2327626.3	769200.0	292241.9	2144285.1	769200.0
Մարզական օբյեկտներ	1263374.3	190478.1	197104.5	1517791.0	158355.7	217104.5	254416.7	-32122.3	20000.0

14) Բերված աղյուսակներ 3-ի և 4-ի ցուցանիշները վկայում են պետական ներդրումների հարաբերակցության փոփոխության մասին մարզերում՝ նրանց տեսակարար ծավալների ավելացման ուղղությամբ՝ 2008-2010 թվականներին: Այսպես, Երևան և մարզեր ընդամենը 29.5/70.5 հարաբերակցությունը դարձել է 11.5/88.5:

15) Մինչդեռ գյուղական տարածքներում բնակչության կենսամակարդակը ցածր է. 2009 թվականին գյուղական աղքատ բնակչությունը կազմում է գյուղական բնակչության 34.9%-ը, իսկ երկրի ողջ բնակչության 34.5%-ը (տես՝ Հավելված 1-ի աղյուսակ 7): Զգալի են տարբերությունները քաղաքային և գյուղական բնակչության աշխատավարձերի միջև, այսպես, գյուղական բնակչության միջին ամսական անվանական աշխատավարձը կազմում է քաղաքային բնակչության միջին ամսական անվանական աշխատավարձի 79.1%-ը: Իսկ գյուղական բնակչության մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամուտները կազմում են քաղաքային բնակչության մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամուտների 85%-ը: 2009 թվականին տնտեսապես ակտիվ բնակչության 38.8%-ը բաժին է ընկնում գյուղական բնակչությանը, որի մեջ գործազուրկները կազմում են 15.4%, իսկ 61.2% տնտեսապես ակտիվ քաղաքային բնակչության մեջ գործազուրկները կազմում են 36.9% (տես՝ Հավելված 1-ի աղյուսակներ 8-10):

16) Հայաստանի Հանրապետությունում 2008-2010 թվականներին առողջապահական, կրթական, մշակութային, մարզական ենթակառուցվածքների արդիականացման համար պետական բյուջեի միջոցներով ներդրվել են ավելի քան 38.0 մլրդ դրամ: Սակայն առողջապահության ծառայություններից բնակչության օգտվելու աստիճանը բավական ցածր է հատկապես գյուղական բնակավայրերում: Հիվանդացության ժամանակ մոտավորապես ամեն երրորդն է (30.5%) դիմել բժշկական խորհրդատվության կամ բուժման համար, ընդ որում երևանաբնակներն ավելի հաճախ՝ (36.2%), քան այլ քաղաքներում բնակվողները (33.5%) և գյուղաբնակները՝ (22.2%):

Ըստ վարչական վիճակագրության տվյալների 2009 թվականին հանրապետությունում նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածությունը կազմել է 24.3%, այդ թվում քաղաքային բնակավայրերում՝ 31.5% և գյուղականում 11.7%: Ըստ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների, 2009 թվականին, ընդհանուր առմամբ, մինչև 6 տարեկան 10 երեխայից մոտավորապես 8-ը չի հաճախել նախադպրոցական հաստատություն: Բնակարանային ֆոնդի բարեկարգվածությունը գյուղում անհամեմատ ցածր է, քան քաղաքում: Խոհանոցի, սառը ջրի, ողողվող զուգարանի և լոգարանի միաժամանակյա առկայություն (գործող) գրանցվել է գյուղական բնակավայրերի միայն 17.2% տնային տնտեսությունների մոտ, իսկ քաղաքային բնակավայրերում նման տնային տնտեսությունները կազմել են 76.8%: Զրահեռացման կենտրոնացված համակարգի առումով բավական զգալի է քաղաք-գյուղ տարբերությունը: Զրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվում են Երևանի գրեթե բոլոր բնակիչները (96.8%): Այլ քաղաքային բնակավայրերում ջրահեռացման կենտրոնացված համակարգ ունեն տնային տնտեսությունների 89.9 %-ը. մինչդեռ գյուղական բնակավայրերում ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվում են տնային տնտեսությունների միայն 21.4%-ը: Դա լուրջ խնդիր է. քանզի կոյուղու առկայությունը շատ կարևոր է բավարար սանիտարական պայմաններ ապահովելու համար. ինչպես նաև առողջապահության տեսանկյունից: Աղբահանության ծառայությունը համեմատաբար լավ է գործում քաղաքային բնակավայրերում՝ մասնավորապես, Երևան քաղաքում, քան գյուղական բնակավայրերում, որտեղ տնային տնտեսությունները շատ հաճախ այրում կամ հորում են իրենց աղբը: Ի տարբերություն քաղաքային համայնքների, որտեղ իրականացվում է կենտրոնացված աղբահանություն գյուղական բնակավայրերում

2009 թվականին աղբի 46.3 տոկոսը թափվել են աղբակույտերի մեջ, 40.9 տոկոսը՝ այրվել են, 5.6 տոկոսը՝ հորվել են, 7.2 տոկոսը՝ մնացած այլ եղանակներով հեռացվել են:

17) Հավելված 1-ի 6-րդ աղյուսակն արտացոլում է բոլոր աղբյուրներով իրականացված կապիտալ ներդրումների հարաբերակցության փոփոխությունը մարզերում նրանց տեսակարար ծավալների ավելացման ուղղությամբ՝ 2005-2009 թվականներին: Այսպես Երևան/մարզեր՝ ընդամենը 81.2/18.8 հարաբերակցությունը դարձել է 68.4/31.4: Հարաբերակցության փոփոխությունը պայմանավորված է նաև տնտեսական ճգնաժամով, մասնավորապես Երևան քաղաքում շինարարական աշխատանքների ծավալների էական նվազմամբ: Նշված միտումները շարունակականությունը կարևոր է դիտվում տարածքային զարգացման համատեքստում, հետևաբար անհրաժեշտ է ապահովել պետական և մասնավոր ներդրումների գերակշիռ մասի ուղղորդումը դեպի մարզեր:

18) Ներդրումների հարաբերակցության փոփոխությունները բերել են տարածքների տնտեսական զարգացման և բնակչության կյանքի բարեկեցության, կրթական, առողջապահական ծառայությունների որակի բարելավման տեմպերի աճին և գործազրկության նվազման: Սակայն դրանց ուղղակի ազդեցությունը տնտեսական զարգացման և աղքատության նվազման վրա մինչ այժմ չի եղել գնահատել:

### **3. Տարածքային զարգացման քաղաքականության միջազգային փորձի նկարագրություն**

19) Եվրամիության քաղաքական օրակարգում տարածքային համաչափ զարգացման խնդիրները հայտնվել են 1950 թվականներին և բազմիցս վերանայվել ու ընդլայնվել են: Այժմ Եվրամիությունում գործում են մի շարք կառուցվածքային հիմնադրամներ և ծախսվում են հսկայական դրամական միջոցներ, որոնց նպատակը Եվրամիության տարածաշրջանների միջև տարածքային զարգացման ներդաշնակության հաստատումն ու ամրապնդումն է: Այս նպատակով Եվրահանձնաժողովում ձևավորվել է Տարածքային քաղաքականության գլխավոր տնօրինություն, որի առաքելությունն է ամրապնդել տնտեսական, սոցիալական իրավիճակը տարածքներում, նվազեցնելով տարածքային զարգացման անհավասարությունները Եվրոպական Միության անդամ երկրների և այլ երկրների տարածքների միջև: Տարածքային անհամաչափությունների նվազեցումը իրականացվում է տարածքների մրցունակությունը բարելավելով և նոր աշխատատեղեր ստեղծելով: Համատեղ ֆինանսավորվող նախագծերի միջոցով տեղեկատվության հասանելիության զարգացման, նորամուծությունների ներդրման արագացման և ներդրումների իրականացման միջոցով բարձրացվում է թույլ զարգացած, կամ ենթակառուցվածքային հիմնախնդիրներ ունեցող տարածքների մրցունակությունը և խթանվում է տնտեսական զարգացումը:

20) Տարածքային քաղաքականության շրջանակներում Եվրամիությունում գործում են երեք հիմնական հիմնադրամներ.

ա. Եվրոպական տարածաշրջանային զարգացման հիմնադրամը, որը գործում է բոլոր անդամ պետություններում և ծրագրեր է իրականացնում հիմնականում մեկ շնչին ամենափոքր ՀՆԱ ընկնող տարածքներում,

բ. միավորման կամ համախմբման հիմնադրամ, որը ֆինանսավորում է տրանսպորտային և էկոլոգիական նախագծեր և գործում է այն անդամ երկրների տարածքներում, որոնց ՀՆԱ-ն փոքր է անդամ երկրների միջին ՀՆԱ-ի 90 տոկոսից:

գ. ենթակառուցվածքների զարգացման հիմնադրամ, որը միջոցներ է տրամադրում երկրներին տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման և բնապահպանական



իրավիճակի բարելավման համար հետագայում Եվրամիությանն անդամակցելու նպատակով (ինտերնետային հասցե՝ [http://ec.europa.eu/dgs/regional\\_policy/index\\_en.htm](http://ec.europa.eu/dgs/regional_policy/index_en.htm)):

21) Կարևոր նշանակություն ունի նաև տարածքային զարգացման քաղաքականության մշակման և իրականացման միջազգային փորձը Հայաստանի Հանրապետության հետ համեմատելի երկրներում: Այդ նպատակով ներկայացվում են (մանրամասն տես՝ Հավելված 2) հինգ երկրների՝ Էստոնիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Լեհաստանի և Սլովակիայի փորձերը: Նշված բոլոր երկրներում էլ տարածքային զարգացման քաղաքականության հիմնական նպատակներն են.

ա. տարածքների կայուն զարգացման համար նախադրյալների ստեղծումը,

բ. զբաղվածության և եկամտի բնագավառում միջտարածաշրջանային տարբերությունների նվազեցումը,

գ. համահարթեցման նպատակով դրամաշնորհների, սուբսիդիաների և սուբվենցիաների տրամադրում տարածքներին,

դ. միջտարածաշրջանային և միջսահմանային համագործակցության իրականացում և եվրոպական ինտեգրում:

22) Բոլոր երկրներում էլ տարածքների միջև առկա սոցիալտնտեսական տարբերությունները վերլուծելու նպատակով իրականացվել է տարածքների գոտիավորում և սահմանվել են այդ գոտիների զարգացման գործիքակազմը.

ա. տարածքների գոտիավորման գործակիցը հաշվարկվել է առանձնացված հիմնականում 4 ենթագործակիցների հիման վրա՝ ժողովրդագրական և զբաղվածության կառուցվածքի ցուցանիշներ, եկամտի ցուցանիշներ, ՓՍԶ-ի ստեղծում, տրամադրված վարկերի ծավալ:

բ. տարածքային զարգացման նպատակներն իրագործելու գործիքներից են տարածքային զարգացման հիմնադրամները, ներդրումները, սուբսիդիաները, վարկերը, ուղղակի ներդրումները, պետական և տեղական տուրքերը, երաշխիքները և արժեթղթերը:

#### **4. Տարածքային զարգացման նպատակները**

23) Տարածքային զարգացման նպատակներն են.

ա. Մրցունակ և գրավիչ տարածքների ձևավորում, մասնավորապես՝

1. ձեռներեցության խթանման, ինչպես նաև մարդու ինքնադրսևորման պայմաններ ստեղծելու նպատակով արտադրական ենթակառուցվածքների (ճանապարհ, տրանսպորտ, կապ, էլեկտրամատակարարում, գազ, խմելու և ոռոգման ջրամատակարարում և այլն) ստեղծում և զարգացում, ինչպես նաև տարածքներում մատուցվող հանրային ծառայությունների՝ կրթական, առողջապահական, մշակութային և այլն հասանելիության ավելացումը և արդյունավետության բարձրացումը:

2. տարածքի համեմատական առավելությունների առևտրայնացումը, և այդ նպատակով պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ջանքերի մեկտեղում, մասնավոր հատվածի ներգրավում,

3. տարածքներում գյուղատնտեսության արդիականացումը և գյուղի հիմնախնդիրների լուծումը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04.11.2010թ. թիվ 1476-Ն որոշումը <Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին>:

բ. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում:

24) Տարածքային զարգացման համար տարածքի կողմից իր արտադրական և այլ հանրային նշանակության գործառույթների և խնդիրների իրականացման նպատակով բարենպաստ սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծում:

25) Տարածքներում գյուղատնտեսության արդյունավետության և երկրի տնտեսության մեջ գյուղատնտեսության ներդրման կայուն աճի ապահովում:

26) Տարածքներում բնակվող բնակիչների կյանքի որակի, բարեկեցության, զբաղվածության մակարդակի բարձրացում, ինչպես նաև տարածքներում բնակչության կենսամակարդակի մոտեցում Երևան քաղաքի չափանիշներին:

27) Տարածքներից միգրացիայի նվազեցում, գյուղական բնակչության քանակի կայունացում:

28) Միջտարածքային և ներտարածքային կյանքի որակի և բարեկեցության մակարդակների տարբերությունների կրճատում:

### **5. Տարածքային զարգացման խնդիրներն են.**

ա. Տարածքների համաչափ զարգացումը. ենթադրում է Երևան քաղաքի և մարզերի, ինչպես նաև մարզերի միջև առկա կենսամակարդակների տարբերությունների նվազեցումը և մարզերի զարգացման տեմպերի մոտեցումը Երևանի զարգացման տեմպերին,

բ. Տարածքների մրցունակության բարձրացումը. ենթադրում է տարածքներում առկա ռեսուրսների համեմատական առավելությունների բացահայտում, անհրաժեշտ պայմանների ստեղծում՝ հատկապես ենթակառուցվածքների մասով, ինչպես նաև մարդկային ռեսուրսների (մարդկանց գիտելիքների, ունակությունների փորձի, հմտությունների համախումբ)՝ որպես ինտենսիվ զարգացման գործոն, օգտագործում տարածքի տնտեսական զարգացման, խնդիրների լուծման և կարիքների բավարարման համար:

գ. տարածքներում տնտեսության դիվերսիֆիկացում և գյուղական բնակչության եկամուտների աղբյուրների ընդլայնում:

դ. բնակարանային պայմանների բարելավում:

ե. Ժամանակակից սոցիալական, ինժեներական, տրանսպորտային, կապի, փոստի, հեռահաղորդակցության և այլ ենթակառուցվածքների ձևավորում:

### **6. Տարածքային զարգացման հիմնական ուղղությունները**

29) Տարածքային զարգացման հիմնական ուղղություններն են.

ա. հանրային ներդրումների գնահատման համակարգի ներդրում, որտեղ որոշիչ հանգամանք կհանդիսանա տարածքային բաղկացուցիչը,

բ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով իրականացվող ներդրումների մեջ Երևանից դեպի մարզեր ներդրումների տեսակարար կշռի աճ,

գ. տարածքներում իրականացվող ներդրումների և տարածքներին տրամադրվող սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհների արդյունավետության բարձրացումը (համահարթեցման նոր մոտեցումների կիրարկում պետական ներդրումների և տրանսֆերտների տրամադրման համատեքստում),

դ. նպատակային ծրագրերի իրականացումը (զարգացման կենտրոնների ձևավորման ծրագրեր, աղետի գոտու վերականգնման, բնակարանային ապահովման, վթարային շենքերի վերականգնման, սողանքային և այլ բնական աղետների հետևանքների վերացման ծրագրեր և այլն),

ե. համայնքների խոշորացում և միջհամայնքային միավորների ձևավորումը,

զ. Համատիրությունների, որպես բնակչությանն անմիջապես առաջնային ծառայություններ մատուցող համակարգի զարգացում,

է. գյուղատնտեսության զարգացում, գյուղատնտեսական նշանակության հողերի խոշորացումը,

ը. մրցունակ և գրավիչ տարածքների (զարգացման կենտրոններ) որոշումը, ինչը կարող է ապահովել իր և շրջակա տարածքների տնտեսական զարգացումը: Ենթադրվում է ֆինանսների, վարչական ղեկավարման, մարդկային և այլ ռեսուրսների հատուկ կենտրոնացում տարածքային զարգացման կենտրոններում, ինչպես նաև ներդրումային ակտիվության զարգացում: Այս պատճառով տնտեսական աճը, ձեռներեցության ակտիվությունը, ներդրումային գործընթացը մրցունակ տարածքներում կլինեն առավել ինտենսիվ, թողնելով ազդեցություն մյուս տարածքների վրա (պարտադիր չէ, որ տնտեսական զարգացման կենտրոնները լինեն մարզային կենտրոններ կամ քաղաքային համայնքներ, դրանք պետք է ունենան զարգացման գերակա հեռանկարներ, ինչպես օրինակ, Դիլիջանը, Ծաղկաձորը, Ջերմուկը, Ստեփանավանը, որոնք այսօր արդեն ունեն իրենց հեռանկարային ծրագրերը և այլն):

Զարգացման ներուժ ունեցող և ամենափոքր թիրախային խմբեր ձևավորող ցուցանիշներով բնութագրված տարածքները կսահմանվեն, որպես զարգացման ներուժ ունեցող տարածքներ:

Զարգացման ներուժը կբնութագրվի հետևյալ ցուցանիշներով՝

1. Աշխարհագրական դիրքի բնութագրիչներ և բնակլիմայական պայմաններ
2. Ենթակառուցվածքներով ապահովվածության մակարդակ
3. Բարձրագույն կրթություն ունեցողների թիվ
4. Բնական պաշարների առկայություն
5. Տարածքներում ավանդույթների առկայություն
6. Գործող կազմակերպությունների քանակ
7. Գործող կազմակերպություններում զբաղվածների տեսակարար կշիռ
8. Ընդամենը ոռոգելի հողատարածքներ, հա
9. Ընդամենը գյուղատնտեսական հողատարածքներ, հա
10. Գործող վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի թիվ
11. Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված գումարների ծավալները
12. Հողի հարկ, հազ. դրամ
13. Գույքահարկ, հազ. դրամ
14. Համահավասար կենսամակարդակի բարելավման պայմաններում ամենամեծ տնտեսական զարգացում ապահովող ներդրումների իրականացում:

թ. պետական աջակցության նպատակային ուղղորդում տարածքներին, մասնավորապես՝ այն հիմնախնդիրների լուծմանը, որոնք ամենամեծ ազդեցությունը կունենան տվյալ տարածքում աղքատության նվազեցման վրա, կամ կապահովեն ամենամեծ տնտեսական զարգացումը:

ժ. նոր աշխատատեղերի ստեղծում: Աշխատուժի դեֆիցիտ ունեցող տարածքներում աշխատուժի ներգրավման նպատակով բարենպաստ և մատչելի բնակարանային

պայմանների ձևավորում, հատկապես ընդլայնելով և զարգացնելով սոցիալական բնակարանների ինստիտուտը:

ժա. ինքնազբաղվածության արդյունավետության բարձրացում գյուղատնտեսական արտադրանք արտադրող, վերամշակող և սպասարկող տնտեսությունների կրոպերացիայի միջոցով:

ժբ. գյուղատնտեսական մթերքների իրացման նպատակով շուկայական ենթակառուցվածքների ձևավորում և զարգացում:

ժգ. տարածքներում բնակարանային ֆոնդի առաջնային շուկայի ձևավորում և զարգացում:

## **7. Տարածքային զարգացման գործիքները**

30) Իրենց տեսակներով և ազդեցությամբ տարածքային քաղաքականության գործիքները կբաժանվեն 6 հիմնական խմբերի՝

ա. Ծրագրավորում,

բ. Ֆինանսական խթաններ,

գ. Տեղեկատվություն և խորհրդատվություն,

դ. Ենթակառուցվածքներին օժանդակություն,

ե. Վարչական միջոցառումներ,

զ. Տարածքային զարգացման հիմնադրամ,

ա. Ծրագրավորում.

«Տարածքային զարգացման ծրագրերը կազմել և գնահատել Հավելված 3-ով առաջարկվող տարածքային զարգացման մակարդակի գնահատման մեթոդաբանությամբ:

Բ. Ֆինանսական խթաններ

1) Կշարունակվեն մինչ օրս Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախաձեռնված հստակ տարածքային ուղղվածությամբ ֆինանսական աջակցության հետևյալ ծրագրերը՝

ա. վարկային ծրագրեր,

բ. պետական հատվածային զարգացմանը նպաստելու ծրագրեր,

գ. երաշխիքային ծրագրեր,

ե. մասնավոր պետական համագործակցությամբ ծրագրեր:

Դ. Տեղեկատվություն և խորհրդատվություն,

1) Հայեցակարգի տեղեկատվական բազան կհանդիսանան Հայաստանի Հանրապետության Ազգային-վիճակագրական ծառայության հրապարակումները, այդ թվում՝ տնային տնտեսությունների հետազոտությունների անվանազերծված տվյալների բազաները և ոլորտային ուսումնասիրությունները, պետական բյուջեները և դրանց կատարողականների անվանազերծված տվյալների բազաները, այդ թվում՝ ընթացիկ հաշվետվությունները, դոնոր կազմակերպությունների հաշվետվություններն ու հետազոտությունները ինչպես պետական, այնպես էլ մարզային մակարդակով, Աղքատության մակարդակի հաշվարկման համար հիմք կհանդիսանա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության և Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման ծրագրերի կողմից «Համայնքների տիպաբանության զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացված «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքները» տեղեկատվական ապահովում, վերլուծություններ և տիպաբանություններ» հետազոտության արդյունքում ստեղծված տեղեկատվական բազան, մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտական աշխատությունները և այլն:

2) Հայեցակարգի հիման վրա ծրագրերի մշակման համար Եվրամիությունից տեխնիկական օժանդակություն, մասնավորապես՝ խորհրդատվություն ստանալու նպատակով կներգրավվեն Եվրամիության փորձագետներ: Այնուհետև ծրագրերի իրականացման համար միջոցներ կձեռնարկվեն Եվրամիության տարածքային քաղաքականության շրջանակներում գործող հիմնադրամներից գումարներ ներգրավվելու ուղղությամբ:

ե. Ենթակառուցվածքներին օժանդակություն: Աղքատության մոդիֆիկացված համաթվի բաղկացուցիչ հանդիսացող արժանավայել կյանքով ապրելու հնարավորությունների սահմանափակության և հասանելիության համաթվի միջոցով կորոշվեն օժանդակություն պահանջող ենթակառուցվածքները:

զ. Վարչական միջոցառումներ: Հասարակական հետաքրքրություն ներկայացնող նախագծերը կկազմվեն տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ և օժանդակությամբ: Նման մեթոդաբանությամբ արդեն իսկ կազմվել և Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն են արժանացել Հայաստանի Հանրապետության մարզային զարգացման ծրագրերը:

է. Տարածքային զարգացման հիմնադրամ: Մինչ օրս գործող Փոքր և Միջին ձեռնարկատիրության հիմնադրամի, Գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օրինակների վրա կուսումնասիրվեն <Տարածքային զարգացման հիմնադրամ> ինստիտուցիոնալ կառույցի ձևավորման նպատակահարմարությունը իրավական հիմքերը և հնարավորությունները:

Տարածքային զարգացման հիմնադրամի նպատակը կլինի տարածքներում ենթակառուցվածքների ձևավորումը և պահպանումը՝ մասնավորապես՝ բնակարանային ֆոնդ, ճանապարհներ, և տարածքային զարգացման կենտրոններում ձեռնարկատիրության խթանման նպատակով երաշխիքներ և շուկայականից ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրում:

### **8. Միջազգային համագործակցության ամրապնդում:**

31) Միջազգային համագործակցության շրջանակներում կակտիվացվեն և կվերանայվեն Հայաստանի Հանրապետության և Անկախ Պետությունների Համագործակցության երկրների, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների երկրների մարզերի և համայնքների միջև համագործակցության նպատակով կնքված համապատասխանաբար ավելի քան 46 և 51 իրավական փաստաթղթերում ամրագրված միջոցառումները, ինչպես նաև կկնքվեն համագործակցության վերաբերյալ նոր իրավական փաստաթղթեր:

32) Հայ-վրացական <ԵվրոԿովկաս> եվրոռեգիոնի շրջանակներում հնարավոր է դարձել սահմանամերձ տարածքներում տնտեսական, սոցիալական, էկոլոգիական և մշակութային համագործակցությունը՝ եվրոպական հիմնադրամների (մասնավորապես՝ Հոլանդիայի կառավարության) օժանդակությամբ: Այս համագործակցությունը պետք է դիտվի հեռանկարային և ընդարձակվի:

33) Միջոցներ կձեռնարկվեն այլ երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության տարածքային միավորների հետ ապակենտրոնացված համագործակցություն իրականացնելու ուղղությամբ:

34) Եվրոպական ռեգիոնների ասամբլեային Հայաստանի Հանրապետության մարզերի անդամակցման արդյունքում հնարավոր են դառնում այդ կազմակերպության շրջանակներում իրականացվող ծրագրերին Հայաստանի տարածքների մասնակցությունը, ինչպես նաև երկկողմանի նոր կապերի ձևավորումը:

**9. Տարածքային զարգացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգի բարելավում:**

35) Մինչև ներդրումների իրականացումը դրանց ազդեցության գնահատում աղքատության նվազման վրա:

36) Համայնքների խոշորացում և միջհամայնքային միավորումների ձևավորում: Տարածքային զարգացման արդյունավետ իրականացումը պայմանավորված է նաև համայնքային զարգացմանն ուղղված արդյունավետ կարողությունների առկայությամբ: Այս առումով կիրականացվի վարչատարածքային համակարգի վերակազմակերպմամբ համայնքների խոշորացում և միջհամայնքային համագործակցության ինստիտուտի ներդրում, որը թույլ կտա, համայնքների լիազորությունները պահպանելով և ընդարձակելով, համայնքային մակարդակում ապահովել դրանց արդյունավետ իրականացումը:

37) Տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների հզորացում, պատասխանատվության բարձրացում, ապակենտրոնացված կառավարման շարունակականության ապահովում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ հասարակական և քաղաքական վերահսկողության ընդլայնում:

38) Միջմարզային համագործակցություն: Միջմարզային համագործակցության շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինները կամ միջհամայնքային միավորումները համատեղ կմշակեն նախագծեր (հողօգտագործման, բնապահպանության, ենթակառուցվածքների գյուղատնտեսության և այլ ոլորտներում) և հանդես են կգան նախաձեռնություններով՝ տրամադրելով միմյանց տեղեկատվական և խորհրդատվական ծառայություններ տարածքներում սոցիալտնտեսական զարգացման համար:

39) Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիարժեք ներգրավում տարածքային զարգացման ծրագրերի մշակման, իրականացման և վերահսկման գործընթացին:

40) Մարզային զարգացման ծրագրերի մոնիտորինգի արդյունավետ իրականացում: Մարզային զարգացման ծրագրերի մոնիտորինգի տարածքային սոցիալ-տնտեսական ցուցանիշների համակարգի միջոցով մարզային զարգացման ծրագրերի իրականացման տարեկան արդյունքների գնահատում և աղքատության նվազման վրա այդ գնահատականների ազդեցության հաշվարկում: Ինչպես նաև մոնիտորինգի տարածքային սոցիալ-տնտեսական ցուցանիշների համակարգի միջոցով Մարզային զարգացման ծրագրերով իրականացման ենթակա ներդրումների ազդեցության գնահատում աղքատության նվազման վրա:

## 1. Տնտեսության հիմնական ոլորտներում կատարված ներդրումներն ըստ մարզերի:

Աղյուսակ 1

Մեկ շնչի հաշվով պետական բյուջեի ներդրումները գյուղատնտեսության ոլորտում (հազ. դրամ)

2009 թվական						2010 թվական					
	ԸՆԴՀԱՆՈՒՂ ԸՆԴՀԱՆՈՒՂ	Ընդհանուրի մասնատ	Սկիզբից մինչև հանրապետության նկատմամբ	Իրացված շնչի հաշվով	Միջին հանրապետության նկատմամբ	ԸՆԴՀԱՆՈՒՂ ԸՆԴՀԱՆՈՒՂ	Ընդհանուրի մասնատ	Սկիզբից մինչև հանրապետության նկատմամբ	Իրացված շնչի հաշվով	Միջին հանրապետության նկատմամբ	2009-ի համեմատ աճը
Երևան	797208.1	5.6	1114.0	715.6	16.4	1416283.8	15.0	1114.0	1271.3	43.8	555.7
Արագածոտն	1446039.0	10.2	141.3	10233.8	234.6	733605.7	7.8	141.3	5191.8	178.9	-5042.0
Արարատ	2437359.1	17.2	278.2	8761.2	200.9	1800325.2	19.1	278.2	6471.3	223.0	-2289.8
Արմավիր	2543622.3	18.0	283.3	8978.5	205.8	2480979.9	26.4	283.3	8757.4	301.8	-221.1
Գեղարքունիք	1668647.8	11.8	241.2	6918.1	158.6	454078.7	4.8	241.2	1882.6	64.9	-5035.5
Կոտայք	704824.1	5.0	279.7	2519.9	57.8	527585.2	5.6	279.7	1886.3	65.0	-633.7
Լոռի	1107510.2	7.8	281.7	3931.5	90.1	519711.0	5.5	281.7	1844.9	63.6	-2086.6
Շիրակ	931207.1	6.6	281.4	3309.2	75.9	270348.1	2.9	281.4	960.7	33.1	-2348.5
Վայոց ձոր	501970.1	3.5	55.8	8995.9	206.2	274331.3	2.9	55.8	4916.3	169.4	-4079.5
Սյունիք	782302.6	5.5	152.9	5116.4	117.3	463017.2	4.9	152.9	3028.2	104.4	-2088.2
Տավուշ	1227833.4	8.7	134.2	9149.3	209.8	472233.8	5.0	134.2	3518.9	121.3	-5630.4
Ընդամենը	14148523.7		3243.7	4361.8		9412499.9		3243.7	2901.8	-1460.1	

Մեկ շնչի հաշվով ենթակառուցվածքներում պետական բյուջեից կատարված ներդրումներն ըստ մարզերի (հազ. դրամ)

2009 թվական						2010 թվական					
	ԸՆԴՄԱՆՆԸ	մեջ վճար վող տոկոսը	ճանաչության թվեր (հազ. մարդ)	մեկ շնչի մեջ գումարը հաշվով	Միջին հանրապետականի նկատմամբ տոկոսը	ԸՆԴՄԱՆՆԸ	մեջ վճար վող տոկոսը	ճանաչության թվեր (հազ. մարդ)	մեկ շնչի մեջ գումարը հաշվով	Միջին հանրապետականի նկատմամբ տոկոսը	2009-ի համեմատ աճը
Արագածոտն	8348814.5	9.8	141.3	59085.7	147.3	8532577.9	11.5	141.3	60386.3	172.8	1300.5
Արարատ	9106304.1	10.7	278.2	32732.9	81.6	9438613.4	12.7	278.2	33927.4	97.1	1194.5
Արմավիր	8593008.3	10.1	283.3	30331.8	75.6	13100638.8	17.6	283.3	46243.0	132.3	15911.2
Գեղարքունիք	11733287.6	13.7	241.2	48645.5	121.3	9513059.9	12.8	241.2	39440.5	112.8	-9204.9
Կոտայք	7708121.8	9.0	279.7	27558.5	68.7	7858658.7	10.6	279.7	28096.7	80.4	538.2
Լոռի	6581924.8	7.7	281.7	23365.0	58.3	2885593.8	3.9	281.7	10243.5	29.3	-13121.5
Շիրակ	15103708.5	17.7	281.4	53673.4	133.8	3746943.8	5.0	281.4	13315.4	38.1	-40358.1
Վայոց ձոր	9098387.0	10.7	55.8	163053.5	406.5	8206139.3	11.0	55.8	147063.4	420.7	-15990.1
Սյունիք	5519263.5	6.5	152.9	36097.2	90.0	2315316.1	3.1	152.9	15142.7	43.3	-20954.5
Տավուշ	3623326.9	4.2	134.2	26999.5	67.3	8842349.9	11.9	134.2	65889.3	188.5	38889.9
Ընդամենը	85416146.9		2129.7	40107.1		74439891.4		2129.7	34953.2	-5153.9	



Մեկ շնչի հաշվով պետական բյուջեից շինարարության ոլորտում կատարված ներդրումներն ըստ մարզերի (հազ. մարդ)

2009 թվական						2010 թվական					
	ԸՆԴՄԱՆՆԸ	Ընդհանուր մասնաճիւղ	Բնակչության թվաքանակի մեկ շնչի հաշվով	Գումարը մեկ շնչի հաշվով	Միջին հանրապետականի նկատմամբ տոկոսը	ԸՆԴՄԱՆՆԸ	Ընդհանուր մասնաճիւղ	Բնակչության թվաքանակի մեկ շնչի հաշվով	Գումարը մեկ շնչի հաշվով	Միջին հանրապետականի նկատմամբ տոկոսը	2009-ի համեմատ արժ.
Երևան	3665223.7	19.5	1114.0	3290.1	56.7	909359.0	11.5	1114.0	816.3	33.4	-2473.8
Արագածոտն	1233301.8	6.6	141.3	8728.3	150.5	502301.5	6.3	141.3	3554.9	145.5	-5173.4
Արարատ	1991590.7	10.6	278.2	7158.8	123.5	576001.3	7.3	278.2	2070.5	84.7	-5088.4
Արմավիր	1504389.6	8.0	283.3	5310.2	91.6	679853.8	8.6	283.3	2399.8	98.2	-2910.5
Գեղարքունիք	1631166.2	8.7	241.2	6762.7	116.6	827640.5	10.4	241.2	3431.3	140.4	-3331.4
Կոտայք	3063900.0	16.3	279.7	10954.2	188.9	1745366.6	22.0	279.7	6240.1	255.3	-4714.1
Լոռի	865937.3	4.6	281.7	3074.0	53.0	692866.9	8.7	281.7	2459.6	100.6	-614.4
Շիրակ	1696025.3	9.0	281.4	6027.1	103.9	793768.0	10.0	281.4	2820.8	115.4	-3206.3
Վայոց ձոր	987462.8	5.2	55.8	17696.5	305.2	651000.0	8.2	55.8	11666.7	477.4	-6029.8
Սյունիք	488504.2	2.6	152.9	3194.9	55.1	323380.8	4.1	152.9	2115.0	86.5	-1079.9
Տավուշ	1681427.5	8.9	134.2	12529.3	216.1	225722.7	2.8	134.2	1682.0	68.8	10847.3
Ընդամենը	18808929.2		3243.7	5798.6		7927261.1		3243.7	2443.9	-3354.7	

Համախառն ներքին արդյունքի մոտավոր արժեքն ըստ մարզերի Հայաստանի Հանրապետությունում՝ 2001-2009թթ. (ընթացիկ գներով՝ մլն դրամ)

Տարիներ	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009
Ընդամենը Հայաստան այդ թվում՝	1175.9	1362.5	1624.6	1907.9	2242.9	2656.2	3139.4	3650.1	3165.5
Երևան	537.4	648.2	820.2	979.7	1249.8	1550.8	1832.9	2131.1	1848.2
Արագածոտն	34.2	44.5	46.6	50.5	53.4	68.0	80.4	93.4	81.0
Արարատ	70.4	93.5	101	116.2	119.9	132.4	156.5	181.9	157.8
Արմավիր	81.2	94.6	94.3	114.6	122.7	126.7	149.7	174.1	151.0
Գեղարքունիք	66.9	74.8	92.9	101.3	99.8	114.0	134.7	156.7	135.9
Լոռի	72.3	79.7	90.7	108.2	110.3	139.1	164.4	191.1	165.8
Կոտայք	108.9	105.1	127.6	125.9	144.0	149.2	176.3	205.0	177.8
Շիրակ	67.9	84.0	93.4	90.4	90.3	100.4	118.7	138.0	119.7
Սյունիք	75.4	73.3	90.7	142.8	172.7	186.6	220.5	256.4	222.4
Վայոց ձոր	29.5	23.6	38.7	33.3	45.3	37.7	44.6	51.8	44.9
Տավուշ	31.7	39.9	38.7	45.1	34.4	51.5	60.9	70.8	61.4
Ընդամենը (առանց Երևանի)	638.5	714.3	804.4	928.2	993.1	1105.4	1306.5	1519.0	1317.3
Այլ քաղաքներ	253.1	289.2	335.3	383.7	432.8	469.1	554.4	644.6	559.0
Գյուղական համայնքներ	385.5	425.1	469.1	544.5	560.3	636.2	751.9	874.3	758.2

Մեկ շնչին ընկող Համախառն ներքին արդյունքի մոտավոր արժեքն ըստ մարզերի Հայաստանի Հանրապետությունում՝ 2001-2009թթ.  
(ընթացիկ գներով՝ հազ. դրամ)

Տարիներ	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009
Ընդամենը մեկ շնչի հաշվով	365.9	424.2	505.9	593.6	697.1	824.6	973.0	1128.7	975.9
Ընդամենը մեկ շնչի հաշվով (ԱՎԾ)	365.8	424.2	505.9	593.6	697.1	824.6	976.1	1103.3	956.6
այդ թվում՝									
Երևան	486.9	587.9	744.3	888.7	1132.7	1404.2	1656.6	1920.6	1659.0
Արագածոտն	247.3	321.5	336.0	363.3	383.3	486.4	573.3	664.1	573.5
Արարատ	259.0	343.8	370.8	425.5	437.9	482.2	567.2	656.8	567.2
Արմավիր	293.9	342.0	340.3	412.7	440.4	453.0	533.3	617.2	533.0
Գեղարքունիք	281.3	314.6	389.8	424.4	417.2	476.0	561.6	651.4	563.3
Լոռի	252.3	279.0	318.6	380.7	388.9	491.3	582.4	678.1	588.5
Կոտայք	399.2	385.7	467.9	460.0	524.2	541.4	636.6	736.7	635.7
Շիրակ	239.7	296.9	330.9	320.6	320.7	356.8	422.1	490.8	425.2
Սյունիք	494.4	479.7	592.8	933.3	1128.8	1220.4	1442.4	1677.1	1454.4
Վայոց ձոր	522.1	421.4	693.5	596.8	811.8	675.6	798.5	928.4	805.2
Տավուշ	220.0	176.0	205.1	248.3	256.5	281.1	333.3	377.7	328.4

4-րդ և 5-րդ աղյուսակներում որպես Համախառն ներքին արդյունքի մոտավոր արժեք հաշվարկվել է արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների ոլորտներում ստեղծված արդյունքների հանրագումարը:

2005-2009 թվականներին պետական բյուջեի և այլ աղբյուրների հաշվին իրականացված կապիտալ ներդրումները մարզերում և Երևան քաղաքում (մլն. դրամ)

Տարեթվերը	Երևան քաղաք	Մարզեր	Հայաստանի Հանրապետություն	Իրականացված կապիտալ ներդրումները տոկոսային արտահայտությամբ (%)	
				Երևան քաղաք	Մարզեր
2005	354802	80323	435125	81	19
2006	531115	112713	643828	82	18
2007	585026	86003	671029	87	13
2008	752534	106146	858680	88	12
2009	397304	182437	579741	68	32

Վերլուծությունը իրականացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա

Աղքատության մակարդակը 2008 և 2009 թվականներին (տոկոսներով)

	2008 թվական			2009 թվական		
	ծայրահեղ աղքատ	աղքատ	տոկոսը ողջ բնակչության մեջ	ծայրահեղ աղքատ	աղքատ	տոկոսը ողջ բնակչության մեջ
ՀՀ քաղաքներում	1.9	27.6	64.9	4.6	33.7	65.5
ք. Երևանում	1.1	20.1	33.8	3.1	26.7	34.5
Այլ քաղաքներում	2.8	35.8	31.0	7.4	41.5	31.0
Գյուղական բնակավայրերում	1.2	27.5	35.1	1.7	34.9	34.5

Միջին ամսական անվանական աշխատավարձը ՀՀ մարզերում, քաղաքային, գյուղական համայնքներում և ք. Երևանում, 2009թ. նոյեմբեր

Ընդամենը	103403	
ք. Երևան	115073	111.2
Արագածոտն	79397	76.7
Արարատ	84139	81.3
Արմավիր	95258	92.1
Գեղարքունիք	84091	81.3
Լոռի	80722	78.0
Կոտայք	94106	91.0
Շիրակ	80046	77.4
Սյունիք	111559	107.8
Վայոց ձոր	76321	73.8
Տավուշ	77921	75.3
Այլ քաղաքային համայնքներ	100705	97.3
Գյուղական համայնքներ	79738	77.1
գյուղական բնակչության միջին ամսական անվանական աշխատավարձի հարաբերակցությունը քաղաքային բնակչության միջին ամսական անվանական աշխատավարձին տոկոսային արտահայտությամբ		79.1



Տնտեսապես ակտիվ բնակչությունը 2007-2008 թվականներին (հազ. մարդ)

	Տնտեսապես ակտիվ բնակչություն			այդ թվում՝					
	ընդամենը	քաղաք	գյուղ	գրաղվածներ			գործազուրկներ		
ընդամենը				քաղաք	գյուղ	ընդամենը	քաղաք	գյուղ	
2007	1637.1	1016.2	620.9	1166.8	646.0	520.8	470.3	370.2	100.1
2008	1655.0	1013.2	641.8	1182.0	639.0	543.0	473.0	374.2	98.8


Տնային տնտեսությունների եկամուտների աղբյուրներն ըստ բնակավայրի տեսակի (մեկ շնչի հաշվով միջին ամսական)

Եկամտի տեսակները	Քաղաքային բնակավայր				Գյուղական բնակավայր			
	դրամ		%		դրամ		%	
	2008	2009	2008	2009	2008	2009	2008	2009
1. Դրամական եկամուտներ	30174	31188	96.8	96.8	20754	22068	78.0	80.6
վարձու աշխատանք	18068	19587	57.9	60.8	7881	7255	29.6	26.5
ինքնագրադավաճություն	3084	1890	9.9	5.9	1092	859	4.1	3.2
գյուղմթերքի և անասունի վաճառք	201	115	0.6	0.4	4670	4610	17.6	16.8
սեփականություն (վարձակալության վճարներ, տոկոսավճարներ)	49	33	0.2	0.1	10	10	0.0	0.1
պետական թոշակներ և նպաստներ	5006	5581	16.1	17.3	4615	5678	17.3	20.7
տրանսֆերտներ	3094	3048	9.9	9.4	1950	1951	7.3	7.1
2. Ոչ դրամական եկամուտներ	1010	1021	3.2	3.2	5852	5311	22.0	19.4
Ընդամենը ամբողջական եկամուտներ	31184	32209	100	100	26606	27379	100	100

Համախառն ներքին արդյունքի մոտավոր արժեքի դինամիկան ըստ մարզերի՝ 2001-2009 թվականներին (ընթացիկ գներով՝ մլրդ դրամ)



Մեկ շնչին ընկող Համախառն ներքին արդյունքի մոտավոր արժեքի դինամիկան ըստ մարզերի՝ 2001-2009 թվականներին (ընթացիկ գներով՝ հազ. դրամ)





1. Տարածքային քաղաքականությունը Բուլղարիայի Հանրապետությունում:

1) 1999 թվականից ի վեր Բուլղարիայի Հանրապետության տարածքային քաղաքականությունն իրականացվում է 1998 թվականի սեպտեմբերին Նախարարների խորհրդի կողմից ընդունված՝ <Տարածքային զարգացման մասին> օրենքի դրույթների համաձայն: Հիշյալ օրենքը կարգավորվում էր տարածքային շրջանային զարգացման քաղաքականության հատուկ նպատակները, խնդիրները, գերակայությունները և գործիքները: Տարածքային զարգացման քաղաքականության հիմնական նպատակներն էին.

ա. շրջանների կայուն զարգացման համար նախադրյալների ստեղծումը,

բ. զբաղվածության և եկամտի բնագավառում միջտարածաշրջանային տարբերությունների նվազեցումը,

գ. միջտարածաշրջանային և միջսահմանային համագործակցության իրականացումն ու եվրոպական ինտեգրումը:

2) Տարածքային զարգացման ազգային ծրագիրը հանդիսանում էր միջամտության հիմնական գործիքը, որը մշակվում էր վեցամյա ժամկետով: Տարածքային զարգացման ազգային ծրագիրն ընդգրկում էր տարածքների զարգացման նախաձեռնությունները: Այն սահմանում էր տարածքային զարգացման նպատակները, սկզբունքները և գերակայությունները վեցամյա կտրվածքով, ինչպես նաև առանձին սոցիալ-տնտեսական աջակցության կարիք ունեցող տարածքները: Տարածքները բաժանվում էին 4 խմբի: Զարգացող տարածքներ՝ համայնքների կամ դրանց խմբերի այն տարածքներն էին, որոնք հարակից էին ավելի քան 300,000 բնակիչ ունեցող մեծ քաղաքներին: Վերջիններիս հզորացումը կարող էր հանգեցնել տնտեսական աճի: Զարգացման տարածքներ՝ այն համայնքների տարածքները, որոնք հարակից էին 100,000-300,000 բնակչություն և զարգացած սոցիալական և տեխնիկական ենթակառուցվածքներ ունեցող քաղաքներին: Միջսահմանային համագործակցության տարածքներն ընդգրկում էին սահմանամերձ համայնքների տարածքները, իսկ հատուկ խնդիրներ և գերակայություններ ունեցող տարածքներն ընդգրկում էին այն համայնքների տարածքները, որոնք ունեին հրատապ լուծում պահանջող սոցիալտնտեսական հիմնախնդիրներ կամ առանցքային նշանակություն երկրի տնտեսության համար:

3) Տարածքային զարգացման նպատակներն իրագործելու գործիքներից էին ներդրումները, սուբսիդիաները, վարկերը, ուղղակի ներդրումները, պետական և տեղական տուրքերը, երաշխիքները և արժեթղթերը:

4) Ծախսերը պետք է կատարվեին պետական բյուջեի և պետական մարմինների, բյուջետային կազմակերպությունների և համայնքների կողմից կառավարվող ազգային հիմնադրամների հաշվին:

5) Այն հիմնական սկզբունքները, որոնց վրա պետք է կառուցվեր ընդլայնված ԵՄ-ի ապագան, հետևյալն էին՝ կայուն տնտեսական զարգացում, տարածքների միջև մրցակցություն, ազգային օրենսդրության համաձայն կառավարման գործառույթի պատվիրակումը տարածքային և տեղական իշխանություններին, ինչպես նաև տարածաշրջանային, միջսահմանային և միջտարածաշրջանային համագործակցություն:

6) Սոցիալտնտեսական անհամաչափությունների վերացմանն ուղղված տարածքային քաղաքականությունը պետք է մշակվեր Տնտեսական զարգացման ազգային ծրագրի

հիման վրա: Վերջինս, որը հիմնվում էր առկա իրավիճակի և առանցքային կարիքների վերլուծության վրա, կազմված էր Եվրամիության պահանջներին համապատասխան: Այն սահմանում էր գործընկերություն ծավալելու և Եվրամիության կողմից խորհրդատվություն ստանալու ռազմավարություն:

7) Տարածքային զարգացման ազգային ծրագիրը հանդիսանալու էր Տնտեսական զարգացման ծրագրի կառուցվածքային մասը՝ ներառելով առկա իրավիճակի նկարագիրն ըստ տարածքների և սահմանելով այն գոտիները, որոնց նկատմամբ պետք է կիրառվեին օրենքով սահմանված գերակայություններին համապատասխան հատկացվելիք աջակցության և զարգացման տարբեր միջոցառումներ: Անհրաժեշտ էր սահմանել տարածքային զարգացման հիմնական գերակայությունները և հաստատել ընդհանուր ինդիկատիվ ֆինանսական ծրագիր:

8) Համանման գործողություններն իրականացնելու նպատակով պետք է ստեղծվեին ինստիտուցիոնալ միավորներ Տնտեսական զարգացման ազգային ծրագրի կառավարման համար, որոնք պետք է իրականացնեին համակարգման, մշակման, ռեսուրսների տրամադրման, իրագործման, վերահսկողության և գնահատման գործառույթներ:

9) Անհրաժեշտ էր ընդլայնել համագործակցությունը կենտրոնական, տարածքային և տեղական իշխանությունների, կառավարության և սոցիալական գործընկերների, ինչպես նաև պետական և ոչ պետական հատվածի միջև: Անհրաժեշտ էր ամրապնդել փոխհարաբերությունները երկրի և Եվրամիության անդամ պետությունների միևնույն մարմինների միջև:

2. Տարածքային քաղաքականությունը էստոնիայում:

10) Տարածքային հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունն էստոնիայում առաջ է եկել 1987 թվականին և տարածքային քաղաքականության սկզբունքներն առաջին անգամ ձևակերպվել են 1989 թվականին <Տնտեսապես ինքնավար էստոնիայի հայեցակարգում>:

11) Տարածքների միջև առկա սոցիալտնտեսական տարբերությունները վերլուծելու նպատակով կազմակերպված առաջին գոտիավորումն ավարտվեց 1991 թվականին: Գոտիավորման գործակիցը հաշվարկվել էր տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առանձնացված 4 ենթագործակիցների հիման վրա՝ ժողովրդագրական և զբաղվածության կառուցվածքի ցուցանիշներ, գործազրկության ցուցանիշներ, եկամտի ցուցանիշներ, ՓՍԶ-ի ստեղծում:

12) Տարածքային քաղաքականությունների մասին հայեցակարգը հաստատվել էր կառավարության կողմից 1994 թվականի: Տարածքային քաղաքականությունը ձևակերպվել էր հետևյալ կերպ. «Տարածքային քաղաքականությունը կառավարության կողմից սահմանված գործունեություն է, որն ուղղված է երկրի բոլոր տարածքների զարգացմանը, ինչպես նաև առանձին տարածքների և ամբողջ երկրի շահերից բխող սոցիալ-տնտեսական զարգացման հավասարակշռմանը:

13) Հայեցակարգի նպատակն էր երկրի բոլոր տարածքներում ապահովել բարձր կենսամակարդակ, տարածքների միջև հավասարակշռված զարգացում և բարելավել բոլոր տարածքների տնտեսական կարողությունները: Տարածքային քաղաքականությունն ուղղված էր երկրի ամբողջ տարածքին, սակայն կառավարությունը միայն որոշ տարածքների կարողացավ շնորհել զարգացման գոտու կարգավիճակ: Առկա խնդրահարույց տարածքների հիմնական դժվարություններն հաղթահարելու և դրանց զարգացման կարողությունն ապահովելու նպատակով 1995 թվականի վերջին մշակվեց տարածքային զարգացման 8 ծրագիր, որոնց նպատակն էր խուսափել ազգային տնտեսության հետագա բևեռացումից և վերջինիս ուղեկցող մակրոտնտեսական

հիմնախնդիրներից (սղաճ, ռեսուրսների անարդյունավետ օգտագործում, արտագաղթ ծայրամասերից և այլն):

14) Տարածքային զարգացման ծրագրերը տնտեսական քաղաքականության ծրագրեր էին, որոնք նախագծվում էին տարածքային կառավարման, մարմինների, տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների համատեղ ջանքերով՝ հաշվի առնելով նախատեսված միջոցառումների ազդեցությունը տարածքի վրա: Տարածքային զարգացման ծրագրերն անհրաժեշտ էին խնդրահարույց տարածքների հիմնական դժվարությունները հաղթահարելու և նրանց անկախ զարգացման կարողությունները երաշխավորելու համար:

15) Տարածքային գոտիավորումն ավարտվել էր 1998 թվականի սկզբներին: Զբաղվածության ցուցանիշի համար հաշվարկվել էր յուրաքանչյուր տարածքի մասշտաբով աշխատուժի մասնակցության մակարդակը՝ հիմնված 1995-1997 թվականների երկրի ազգային մակարդակով գործազրկության միջին մակարդակի վրա: Եկամտի ցուցանիշը հնարավորություն էր տալիս տարբերակել տեղական ինքնակառավարման մարմինները և բաղկացած էր 1996-1997 թվականներին աշխատունակ տեղական բնակչի հաշվով անձնական եկամտահարկի վճարումների չափից, սոցվճարների չափից և սոցիալական օգնության համար դիմումների քանակից: Վերջին երկու թվերը վերաբերում են 1997 թվականին և կապված են համայնքի բնակիչների թվի հետ: Երրորդ ցուցանիշն արտացոլում էր ռազմավարական (Երկարաժամկետ) բնութագրիչները և բաղկացած էր տեղանքի գործակցից, որը հիմնված էր փորձագիտական գնահատումների և ստույգ տվյալների վրա, բնակչության տարիքային կառուցվածքից և 1959-1989 թվականներին ժողովրդագրական զարգացումներից (արտացոլում էր նաև երկարաժամկետ միգրացիան):

16) Հստոնիայի ամենահարուստ տարածքի համապատասխան ցուցանիշը կազմում էր Հյուսիսային Հստոնիայի մակարդակի 1/3-1/2-ը և նվազում էր տարածքների զարգացման մակարդակի համաձայն: Հստոնիայի՝ փոքր և մեծապես կենտրոնացված լինելու պատճառով ֆինանսական և բիզնես ծառայությունները, հանրային հատվածի ամենաբարձր միջին աշխատավարձով բարձրաստիճան գործադիր մարմիններն, ինչպես նաև համեմատաբար բարձր աշխատավարձ վճարող արտասահմանյան կազմակերպությունները կենտրոնացած էին մեկ տարածքում:

17) Ազգային տարածքային քաղաքականության գլխավոր նպատակներն էին բոլոր տարածքների բնակիչների համար երաշխավորել ապահով կյանքի պայմաններ՝ ներառյալ աշխատանք գտնելու հնարավորություն, հանրային ծառայությունների հասանելիության և առողջության ու բարեկեցության համար անվնաս միջավայր, բոլոր տարածքներում տնտեսական զարգացման ներուժ, տարածքում բնակչություն և բնակավայրի զարգացման հավասարակշռված դինամիկա, կայուն զարգացում և ազգային տարածքային ամբողջականություն:

3. Տարածքային քաղաքականությունը Հունգարիայում:

18) Շուկայական տնտեսությանն անցումը և հանրային կառավարման համակարգի փոփոխությունը հիմնովին փոխեցին Հունգարիայի տարածքային քաղաքականության իրականացման միջավայրը, նպատակները, ինչպես նաև ինստիտուցիոնալ և կարգավորման համակարգերը: 1990 թվականին ստեղծվեց Տարածքային զարգացման հիմնադրամը (ՏՀՀ), որը 1991 թվականին վերակազմավորվեց՝ տարածքային զարգացումը

Ֆինանսավորելու նպատակով: Օրենքը սահմանում էր, որ Տարածքային զարգացման հիմնադրամի նպատակներն են.

ա. ապահովել հետամնաց տարածքների տնտեսության ամրապնդումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, վատ ոռոգվող տարածքների վերակազմավորումը և հողերի օգտագործման արդյունավետության բարձրացումը,

բ. ապահովել գործազրկության բարձր մակարդակ ունեցող տարածքների տնտեսական վերակազմավորումը և իրականացնել մրցունակ և շուկայավարման ենթակա տնտեսական գործունեություն,

գ. պարզեցնել տարածքային վերակազմավորումը միջտարածքային ենթակառուցվածքների միջոցով,

դ. ապահովել տարածքային զարգացման տնտեսական ծրագրերի նախագծումը և գործարար տեղեկատվության ծառայությունների զարգացումը,

ե. աջակցել կառավարության և պառլամենտի կողմից մշակված տարածքային զարգացման ծրագրերի իրականացմանը:

19) Օրենքի համաձայն՝ հիմնադրամը պետք է ֆինանսավորվեր 10 տարբեր աղբյուրներից, որոնցից ամենակարևորներն էին պետական բյուջեից ստացվող պետական լրավճարները, միջազգային օգնությունը և վարկերը, ինչպես նաև մասնավորեցումից ստացված միջոցները:

20) Կառավարության որոշումը սահմանում էր տարածքային զարգացման նպատակով աջակցություն ստացող շրջանների 4 կատեգորիա.

ա. հետամնաց տարածքներ, որոնք սահմանվում էին սոցիալտնտեսական չափանիշների հիման վրա,

բ. տարածքներ, որոնք ինքնին հետամնաց չէին, սակայն գտնվում էին այն տարածքներում, որոնք ըստ սոցիալ-տնտեսական չափանիշների համարվում են հետամնաց,

գ. զբաղվածության գոտիների տարածքներ, որտեղ գործազրկության մակարդակը 1.5 անգամ գերազանցում էր երկրի միջին ցուցանիշը,

դ. տարածքներ, որոնք հատկապես նորացման կարիք ունեին:

21) Որպես <հետամնացության> չափանիշներ օգտագործվել են հետևյալ գործակիցները. երկարատև գործազրկության ցուցանիշը, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների վարձատրության ցուցանիշը, ոռոգվող հողերի միջին արժեքը, մեկ շնչին բաժին ընկնող եկամտահարկը, ջրագծերից ջուր ստացող բնակարանների համամասնությունը, 1000 բնակչի հաշվով հեռախոսների քանակը, 60 և ավելի տարեկան բնակիչների թիվը, 1980–1989 թվականներին ընկած ժամանակահատվածում միգրացիայի կշիռը 1980թ. բնակչության թվի մեջ, 1980–1989թթ. ընթացքում կառուցված բնակարանների թիվը, 1000 բնակչի հաշվով ավտոմեքենաների քանակը: Այս ցուցանիշների հիման վրա աջակցության ենթակա տարածքների քանակը 1980-ական թվականների սկզբի 964-ի համեմատ աճել էր 75 տոկոսով և կազմել 1325:

22) Հունգարիայի տարածքային կառուցվածքի ապագան սահմանվել էր երկրի տնտեսական զարգացման հայեցակարգում, որն ընդունվել էր պառլամենտի կողմից 1998թ. մարտին: Հայեցակարգի նպատակներն էին.

ա. ձևակերպել տարածքային զարգացման այն երկարաժամկետ սկզբունքները, ուղեցույցները և նպատակները, որոնք համապատասխանում են միջազգային իրավիճակին, որոնց կառավարությունը հետևում է սեփական տարածքային զարգացման գործունեության ընթացքում և որոնցով կառավարությունը կուղղորդի տարածքային զարգացման մասնակիցներին,

բ. մանրամասնել այն տարածքային թիրախները, որոնք պետք է նշվեն կառավարության ճյուղային զարգացման քաղաքականություններում,

գ. խթանել ինստիտուցիոնալ համակարգի խնդիրների իրականացումը և ներդաշնակեցնել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերը:

23) Հանրային ֆինանսավորման վերաբաշխման արդյունքների հետ համեմատած տարածքային աջակցության ազդեցությունը փոքր էր: Տարածքային զարգացման հիմնադրամի միջոցները կազմում էին ՀՆԱ-ի 0.2 տոկոսից քիչ: Հունգարիայում կառավարության տարածքային քաղաքականությունը համատեղ ֆինանսավորվում էր բյուջեի տարբեր ենթահամակարգերի, հատկապես, կենտրոնական բյուջեի, առանձին պետական հիմնադրամների, և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային միջոցների հաշվին:

24) Հունգարիայի տարածքային զարգացման, ինչպես նաև նրա առանձնահատուկ ինստիտուցիոնալ համակարգի համալիր և բարձրակարգ իրավական կարգավորումը եզակի և առաջատար բնույթ ունի և այն նույնիսկ կարող է օրինակ ծառայել մի շարք ԵՄանդամ պետությունների համար: Այս փաստը նշվել է նաև Հունգարիայի վերաբերյալ ԵՀ հաշվետվության մեջ, համաձայն որի, Հունգարիայի տարածքային քաղաքականության տարրերի մեծ մասը համադրելի է ԵՄ կառուցվածքային քաղաքականության հետ: Հունգարիայի տարածքային զարգացման հայեցակարգի կառուցվածքը և դրա տարածքային ուղղվածությունը մասամբ համապատասխանում էին ազգային զարգացման ծրագրերի և երկարաժամկետ զարգացման նպատակներին ներկայացվող ԵՄ պահանջներին:

4. Տարածքային քաղաքականությունը Լեհաստանում:

25) 1989 թվականից հետո Լեհաստանի տարածքային կազմակերպումն իրականացվում էր երկու եղանակով՝ 1989 թվականին տեղական մակարդակով ներմուծվեց ինքնակառավարման համակարգը և 1999 թվականից ի վեր այն հաստատվեց նաև միջանկյալ և տարածքային մակարդակներում: Առաջինը, 1999 թվականից ի վեր տարածքները, դառնալով տնտեսապես և քաղաքականապես առավել հզոր, ստանձնեցին մի շարք պարտականություններ, որոնք նախկինում իրականացվում էին ազգային կառավարության կողմից, ինչպես օրինակ՝ տարածքային զարգացման ռազմավարությունների մշակումը, աշխատանքի շուկայի տարածքային քաղաքականության իրականացումը, տարածքային նշանակության ծառայությունների մատուցումը, ինչպես նաև արտաքին կապերի հաստատումը: Քանի որ ապակենտրոնացման գործընթացն ընթացքի մեջ էր, տարածքները պետք է կարողանային նաև իրականացնել այդ ժամանակ առհասարակ չիրականացվող նոր առաջադրանքներ (ինչպես օրինակ՝ նորարարությունների տարածքային համակարգերի ստեղծում, տեխնոլոգիաների տրամադրման կենտրոններ, միջազգային առաջընթաց և այլն): Երկրորդը, քանի որ տեղական և տարածքային քաղաքական էլիտայի լիազորությունները տարբերակված էին, տարածքային ինքնակառավարման մարմինների կողմից ձեռքբերված արդյունքները պետք է հանգեցնեին տարածքային միավորների զարգացման ուղիների տարբերակմանը: Առավել խելացիները կդառնային առավել հարուստ, մինչդեռ մյուսներն ի վիճակի չէին լինի դիմակայել համաշխարհային մրցունակ տնտեսության մարտահրավերներին:

26) Ապակենտրոնացված համակարգում շրջաններն իրավասու էին օգտագործել տարածքային ներուժն իրենց հայեցողությամբ: Կենտրոնական կառավարությունը պետք է միջամտեր միայն այն պարագայում, եթե նման միջամտությունը շահավետ լիներ ողջ երկրի համար, հիմնական տրանսպորտային միջանցքների կառուցումը և

արդիականացումը, անդրսահմանային համագործակցության ընդլայնումը, կրթական և գիտական ու տեխնոլոգիական ներուժի զարգացման գործում շրջաններին աջակցելն

ամենաակնհայտ միջոցառումներն էին, որոնք կարող էին բարձրացնել Լեհաստանի տարածքների՝ միջազգային ասպարեզում մրցունակությունը և արդյունքում ողջ երկրի մրցունակությունը:

27) Լեհաստանի փորձը հանգեցնում են հետևյալին.

ա. Հաջորդ տասնամյակում համաշխարհային շուկայի մրցակցության սկզբունքների հետ մեկտեղ շրջանները կզարգանան՝ համաձայն տարբեր մոդելների: Ուժեղները կդառնան առավել ուժեղ, իսկ թույլերը՝ առավել թույլ: Տարբեր մոդելներով զարգացումը պայմանավորված է մի շարք գործոններով՝ վայրը, տնտեսական, սոցիալական և ինստիտուցիոնալ կառույցները, գիտական և տեխնոլոգիական զարգացման ներուժը, ինչպես նաև ակադեմիական ներուժը և այլն:

բ. Միջազգային ուղղվածությանը սկսել է էական դերակատարություն ունենալ Լեհաստանի տնտեսության և տարածքային զարգացման ուղիների ձևավորման գործում: Միայն այն տարածքները, որոնք կկարողանան բավարարել կապիտալ և նորարական տնտեսական գործունեությունների համար մրցակցության համաշխարհային մարտահրավերները, ի վիճակի կլինեն նայել ապագային որոշակի հույսով:

գ. Ակնհայտորեն կարևորվում է տնտեսական կառույցների դերը, սակայն հավասարապես կարևոր են նաև սոցիալական կառույցները, արժեքները և դիրքորոշումները:

դ. Քաղաքացիական հասարակության ինստիտուտների և գործակառույցների առկայությունը սոցիալական գործընթացի ամենակարևոր տարրերն են: Քաղաքացիական հասարակության ինստիտուտների հին ավանդույթները (ինքնակառավարում, համատեղ աջակցության կազմակերպություններ, և այլն) հնարավորություն են տալիս տարածքին ստեղծել մրցունակ տնտեսություն և արդյունավետորեն գործող ինստիտուտներ:

ե. Ապակենտրոնացված, բաց սոցիալտնտեսական համակարգում ազգային տարածքային քաղաքականությունների կարգավորման շրջանակները դառնում են առավել սահմանափակ: Մի կողմից այս քաղաքականությունները պետք է աջակցեն առավել նորարարական և առաջանցիկ շրջաններին և վայրերին՝ մրցակցությունը բարձրացնելու հարցում, իսկ մյուս կողմից մեղմացնեն առավել հետամնաց տարածքներում մրցակցության մեջ պարտություն կրելու բացասական ազդեցությունը: Քաղաքականություններով չպետք է լուծվեն անհնարին և անիրատեսական խնդիրներ, ինչպես օրինակ՝ տարածքային զարգացման հարատև միտումները փոխելու հարցը: Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը՝ ընդհանուր առմամբ հետամնաց, ծայրամասային տարածքների հարաբերական դիրքը դժվար է դրականորեն փոխել ազգային և նույնիսկ միջազգային տարածքային քաղաքականությամբ:

5. Տարածքային քաղաքականությունը Սլովակիայում:

28) 1996-ից մինչև 1998 թվականները կենտրոնական կառավարության կողմից հատուկ ուշադրություն էր դարձվում տարածքային քաղաքականության օրենսդրական, վարչական և ինստիտուցիոնալ շրջանակներին: 1996-ին իրականացվեց տեղական կառավարման համակարգի բարեփոխման երկրորդ փուլը, որը կարող էր բնութագրվել հետևյալ կերպ՝

ա. վարչատարածքային կառուցվածքի հեռանկարային փոփոխություններ,

բ. տարածքային պետական կառավարման մարմինների համաչափ, երկշերտանի համակարգ՝ տեղական և տարածաշրջանային մակարդակներով, խնդիրների և լիազորությունների լայն շրջանակների համակենտրոնացմամբ,

գ. տեղական և պետական կառավարման մարմինների արդյունավետ կազմակերպում՝ հորիզոնական ինտեգրման սկզբունքի հիման վրա:

29) 1990 թվականից հետո Սլովակիայի տարածքների միջև տարբերակման գործընթացների խորացման հիմնական պատճառ հանդիսացավ վերափոխման

գործընթացի դանդաղեցումը: Ի հայտ եկած կարևորագույն գործոններն էին Տնտեսական համագործակցության խորհրդի շուկայի փլուզումը, Վարշավյան համաձայնագրի նախկին երկրների միջև զինամթերքի վաճառքի դադարեցումը, հարկաբյուջետային ապակայունացումը մինչ այդ պարբերաբար հատկացվող պետական սուբսիդիաների կտրուկ կրճատման պատճառով, ռազմական արդյունաբերության կոնվերսիան առանց պատշաճ նախապատրաստման, կառավարության որոշ ստանդարտ քաղաքականությունների բացակայությունը (արդյունաբերական, տեխնոլոգիական կամ բազմակողմանի տարածքային տնտեսական քաղաքականության), ինչպես նաև Չեխիայի հետ ընդհանուր պետության փլուզումը: Այս զարգացումներն ի հայտ բերեցին մի շարք տարածքների կառուցվածքային թերությունները և դրանց շտկման ցածր հնարավորությունները:

30) Տարածքային տնտեսական ներուժը հնարավոր է չափել մի քանի եղանակով: Սակայն Սլովակիայում տարածքների համեմատության նպատակով օգտագործվել են հետևյալ ցուցանիշները՝ մեկ շնչին ընկնող ավելացված արժեք, մեկ շնչին ընկնող ներդրումներ, մեկ շնչին ընկնող օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ), 1000 բնակչի կտրվածքով գործարարների քանակը և 1000 բնակչի կտրվածքով գործազուրկների քանակը:

31) Սլովակիայի տարածքների տնտեսական կառուցվածքի և ներուժի գլխավոր բնութագրերն են հանդիսանում կենտրոնի և ծայրամասերի միջև հարաբերությունները: Տնտեսական գործունեության տեսակների և ցուցանիշների շատ դեպքերում ակնհայտ է Բրատիսլավայի կենտրոնական դիրքը: Մայրաքաղաք Բրատիսլավայի կենտրոնական դիրքը Եվրամիության հետ անմիջապես սահմանային գոտում (արտաքին առևտրային հարաբերությունները դեպի արևմտյան առաջադեմ շուկայական տնտեսություն վերակողմնորոշման հետ մեկտեղ) հանդիսանում է հետագա զարգացման գլխավոր շարժիչ ուժը:

32) Տարածքների և գյուղական վայրերի զարգացման մասում տարածքային քաղաքականությունը դիտարկվում է որպես կենտրոնի թիրախային գործունեություն, որը նպատակաուղղված է տարածքային անհամաչափությունների հարթմանը: Շեշտն առաջին հերթին դրվում է այն հաստատությունների և գործակալությունների գործունեության վրա, որոնք իրենց խնդիրների և լիազորությունների շրջանակներում մասնակցում են պետական տարածքային քաղաքականության նախագծման և իրագործման աշխատանքներին:

33) 1997 թվականի տարածքային քաղաքականության հայեցակարգով սահմանվեցին հատուկ նպատակներ և դրանց հասնելու ուղիները՝ ազգային և տարածքային մակարդակի մի շարք հայեցակարգային և ծրագրային փաստաթղթերի միջոցով: Կառավարության հենց այդ սկզբունքային փաստաթուղթն է սահմանել տարածքային քաղաքականության ձևակերպման և իրականացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ շրջանակը, ինչպես նաև առաջարկել ձևափոխել այն՝ ԵՄ կառուցվածքային հիմնադրամի միջոցներից օգտվելու գործակառույցին համապատասխանելու համար:

Տարածքային զարգացման գնահատման մեթոդաբանությունը

1) Տարածքներում աղքատության մոդիֆիկացված համաթվի մակարդակը առաջարկվում է հաշվարկել սոցիալտնտեսական իրավիճակը բնութագրող ցուցանիշների միջոցով, գնահատելով ներդրումների ազդեցությունն աղքատության մակարդակի վրա: Տնտեսական զարգացման մակարդակի փոփոխությունն առաջարկվում է հաշվարկել ՀՆԱ-Ն ձևավորող արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, ծառայությունների ոլորտներում կատարված ներդրումների արդյունավետությամբ:

2) Հիմք ընդունելով Միավորված Ազգերի Կազմակերպության մարդկային զարգացման 2010 թվականի հաշվետվությունը առաջարկվում է Հայաստանի Հանրապետության մարզային կտրվածքով համալիր ցուցանիշ՝ աղքատության մոդիֆիկացված համաթվի հաշվարկի մեթոդաբանություն: Աղքատությունը ներառում է գործազրկությունը (եկամտային աղքատություն) և բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորությունների սահմանափակությունը և հասանելիությունը (մարդկային աղքատություն): Անհատի որոշակի աշխատանքով ապահովությունը նրա կողմից եկամուտ ստեղծելու հնարավորությունն է, որը բնութագրվում է բազմաթիվ ցուցանիշներով, մասնավորապես՝ սեփական հող, կենդանու առկայություն, ապրանքային շուկաներին հասանելիություն, սեփական հողն ամբողջությամբ մշակելու հնարավորություն, ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորություն, աշխատանքի առկայություն և այլն: Այս ցուցանիշների հաշվարկման միջոցով հնարավոր կլինի գնահատել տվյալ տարածքում որոշակի աշխատանքով զբաղվելու հնարավորություն չունեցող, այսինքն եկամտային աղքատություն ունեցող մարդկանց տեսակարար կշիռը, որոնք էլ կհանդիսանան պետական միջամտության թիրախ պետության կողմից եկամտային աղքատության նվազեցման համար:

3) Բարեկեցիկ կյանքի հնարավորությունների սահմանափակությունը և անհասանելիությունը (մարդկային աղքատություն) բնութագրվում է կրթական և առողջապահական ծառայությունների ֆիզիկական և նյութական անհասանելիությամբ, կենտրոնացված գազամատակարարում, ջրամատակարարում, ջրահեռացում, ոռոգման ջուր, անցանելի ճանապարհներ ունենալու հնարավորությամբ և այլն: Այս ցուցանիշների հաշվարկման միջոցով հնարավոր կլինի գնահատել տվյալ տարածքում բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորությունների սահմանափակությունը և հասանելիությունը, այսինքն արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների ֆիզիկական բացակայության կամ անբավարար լինելու պատճառով դրանցից օգտվել չկարողացող մարդկանց տեսակարար կշիռը, որոնք էլ կհանդիսանան պետական միջամտության թիրախ պետության կողմից մարդկային աղքատության նվազեցման համար:

4) Արդյունքում եկամտային և մարդկային աղքատությունների համաթվերը միավորվում են մեկ աղքատության մոդիֆիկացված համաթվի մեջ, և ըստ այդ մոդիֆիկացված համաթվի ցուցանիշի նվազման աստիճանի հնարավոր կլինի հաշվարկել պետական միջամտության ազդեցության չափը և արդյունավետությունը:

5) Նշենք, որ եկամտային և մարդկային աղքատության հաշվարկման հիմքում դրվող ցուցանիշները կարող են ունենալ տարբեր բովանդակություններ: Հայաստանի



համայնքները> տեղեկատվական ապահովում, վերլուծություններ և տիպաբանություններ> հետազոտության մեջ վերհանվել և ուսումնասիրվել է եկամտային և մարդկային աղքատությունը բնութագրող 300-ից ավելի ցուցանիշ, որոնք վերաբերվում են տնտեսության բոլոր ոլորտներին՝ էներգետիկա, տրանսպորտ, կապ, քաղաքաշինություն, բնապահպանություն, գյուղատնտեսություն, արտակարգ իրավիճակներ, ֆինանսներ և այլն: Սույն Հայեցակարգով առաջարկվող մեթոդաբանությունը համընդհանուր է և նրա մեջ հնարավոր է ներառել ցանկացած նման բովանդակության այլ ցուցանիշներ:

6) Աղքատության մակարդակի հաշվարկման համար հիմք կհանդիսանան Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության և Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման ծրագրերի կողմից <Համայնքների տիպաբանության զարգացում> ծրագրի շրջանակներում իրականացված <Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքները> տեղեկատվական ապահովում, վերլուծություններ և տիպաբանություններ> հետազոտության ցուցանիշները, որոնք բնութագրում են վերոնշյալ ոլորտները: Ցուցանիշները յուրաքանչյուր տարի կթարմացվեն այդ հետազոտության թիվ 1 հավելվածով ներկայացված <Համայնքների տվյալների հավաքագրման> թերթիկի և աղքատության մակարդակի վրա տարածքներում իրականացված ներդրումների ազդեցության գնահատականների հաշվարկման միջոցով:

7) Առաջարկվող աղքատության մոդիֆիկացված համաթվի հաշվարկի մեթոդաբանության հիմքում աղքատության համաթվի հաշվարկի միջազգայնորեն ընդունված մեթոդաբանությունն է:

8) Տարածքային զարգացման անհամաչափությունները մարզային և համայնքային մակարդակում առաջարկվում է գնահատել աղքատության մոդիֆիկացված համաթվի միջոցով, որը հասարակական բարեկեցության կենսամակարդակի ֆունկցիա է և բաղկացած է եկամտային աղքատության (գործազրկության և խոցելիության ցուցանիշներ) և մարդկային աղքատության համաթվերից: Այս առումով աղքատության մոդիֆիկացված համաթիվը Հայաստանի Հանրապետության տարածքներում աղքատությունը նկարագրող համաչափ ցուցանիշ է, որը երեք համաթվերի՝ գործազրկության, խոցելիության և բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորությունների սահմանափակության և անհասանելիության համաթվերի կշռված գումարն է: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ա. } HDM = \left\{ \frac{1}{3} \times (I^3 + V^3 + HP^3) \right\}^{\frac{1}{3}} \text{ որտեղ՝}$$

$$\text{բ. } I = \frac{1}{8} (I_1 + I_2 + I_3 + I_4 + I_5 + I_6 + I_7 + I_8) \text{ գործազրկության համաթիվն է,}$$

$$\text{գ. } V = \frac{1}{4} (V_1 + V_2 + V_3 + V_4) \text{ խոցելիության համաթիվն է,}$$

$$\text{դ. } HP = \frac{1}{3} (E + H + S) \text{ բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորությունների սահմանափակության և անհասանելիության համաթիվն է,}$$

$$\text{ե. } E = \frac{1}{2.3} \left( E_1 + E_2 + \frac{1}{3} E_3 \right) \text{ կրթական հնարավորությունների սահմանափակության և անհասանելիության համաթիվն է,}$$

գ.  $H = \frac{1}{2.3} \left( H_1 + H_2 + \frac{1}{3} H_3 \right)$  առողջապահական հնարավորությունների սահմանափակության և անհասանելիության համաթիվն է, է.



Կենսապայմանների հնարավորությունների սահմանափակության և անհասանելիության համաթիվն է:

9) Աղյուսակ 5-ում ներառված 19 ցուցանիշները (նշված ցուցանիշները ընտրվել են Միավորված Ազգերի Կազմակերպության մարդկային զարգացման 2010 թվականի հաշվետվությունից (ինտերնետային հասցե՝ [http://www.un.org/ru/development/hdr/2010/hdr\\_2010\\_complete.pdf](http://www.un.org/ru/development/hdr/2010/hdr_2010_complete.pdf) էջ 161): Այս ցուցանիշներն օգտագործվել են նաև Եվրոպական Միության անդամ երկրների կողմից իրենց զարգացման ծրագրերը կազմելու համար, մասնավորապես՝ Լեհաստանի Ազգային զարգացման ռազմավարություն 2007-2015 (ինտերնետային հասցե՝ <http://www.mrr.gov.pl/english/strategies/srk/strony/srk.aspx> էջ 50,57,65,71,83) Արևելյան Լեհաստանի զարգացում (ինտերնետային հասցե՝ [http://www.mrr.gov.pl/english/european\\_funds\\_2007\\_2013/european\\_funds\\_2007\\_2013/porpw/strony/developmentofeasternpoland.aspx](http://www.mrr.gov.pl/english/european_funds_2007_2013/european_funds_2007_2013/porpw/strony/developmentofeasternpoland.aspx) էջ 44)): Բացի այդ նշված ցուցանիշներն օգտագործվում են <Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ>-ի (ինտերնետային հասցե՝ <http://www.ipsc.am>) կողմից <Համայնքի կարիքների գնահատում ըստ մարզերի. հիմնախնդիրները, ռեսուրսները և զարգացման հնարավորությունները> հետազոտություններում: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ մարզերում առաջնային հիմնախնդիրներ են գործազրկությունը, աղքատությունը և ցածր կենսամակարդակը: Հիմնվելով այս հետազոտությունների և Միավորված Ազգերի Կազմակերպության մարդկային զարգացման 2010 թվականի հաշվետվության վրա աղքատության մոդիֆիկացված համաթվի հաշվարկման մեջ առաջարկվում է ընդգրկել Աղյուսակ 5-ի ցուցանիշները: Իրականացնված փորձագիտական-սոցիոլոգիական հարցումների արդյունքները վկայում են, որ առաջնային հիմնախնդիր է հանդիսանում գործազրկությունը և 2010 թվականի դեկտեմբերի դրությամբ նման դիրքորոշում են հայտնել հարցվողների 43.5-ը: Գործազրկության համաթվին առաջարկվում է տալ ընդհանուրի 0.4 չափի կշիռ, իսկ համաթիվը ձևավորել Աղյուսակ 5-ում ներկայացված ցուցանիշների միջոցով համաձայն 8-րդ կետի <բ> բանաձևի: Հարցվողների 19.4 տոկոսի կողմից ներկայացված հաջորդ հիմնախնդիրը մարդկանց աղքատությունը և ցածր կենսամակարդակն է, որը Աղյուսակ 5-ում սահմանված է, որպես բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորությունների սահմանափակության և անհասանելիության համաթիվ: Համաթվի մեջ ներառված ցուցանիշների գծով, որպես առանձին տարրեր կատարվել են հարցումներ և դրանք առանձին ունեն իրենց տեսակարար կշիռները: Միավորված Ազգերի Կազմակերպության մարդկային զարգացման 2010 թվականի հաշվետվության մեջ դրանք ներկայացված են մեկ համաթիվով: Այս պատճառով առաջարկում ենք մարդկանց աղքատությունը և ցածր կենսամակարդակը (Աղյուսակ 5) ներկայացնել բարեկեցիկ

կյանքով ապրելու հնարավորությունների սահմանափակության և հասանելիության համաթվի միջոցով և նրան տալ 0.5 չափի կշիռ: Երրորդ բաղադրիչը, որը Միավորված Ազգերի Կազմակերպության մարդկային զարգացման 2010 թվականի հաշվետվության մեջ դիտարկվում է որպես խոցելիության համաթիվ, թոշակառուների և նպաստառուների տեսակարար կշիռն է: Ըստ նույն փորձագիտական-սոցիոլոգիական հարցումների՝ հարցվողների 2.4 տոկոսն է համարել, որ թոշակները և սոցիալական նպաստները ցածր են: Հետևաբար խոցելիության համաթիվն առաջարկվում է տալ 0.1 չափի կշիռ:

Աղյուսակ 5

<p><b>I-գործազրկության համաթիվ (նյութական հնարավորություններից զրկվածության համաթիվ)</b></p>	<p>I<sub>1</sub>-հողազուրկ տնային տնտեսությունների տեսակարար կշիռը (սեփական և վարձակալած գյուղատնտեսական նշանակության հող չունեցող տնային տնտեսությունների թիվը) համայնքի տնային տնտեսությունների թվաքանակում</p>
	<p>I<sub>2</sub>-տնամերձ հող չունեցող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը համայնքի տնային տնտեսությունների թվաքանակում</p>
	<p>I<sub>3</sub>-ապրանքային շուկաներին (գյուղ մթերքների իրացման համար նախատեսված մոտակա ենթակառուցվածք) դժվար հասանելիություն (1-15 կիլոմետր հեռավորության համար գործակիցը առաջարկվում է սահմանել 1, 15-30 կիլոմետր հեռավորության համար՝ 0.6, 30-50 կիլոմետր հեռավորության համար՝ 0.2, 50 և ավելի կիլոմետր հեռավորության համար՝ 0)</p>
	<p>I<sub>4</sub>-անասնազուրկ տնային տնտեսությունների տեսակարար կշիռը (ոչ մի տեսակի անասուն չունեցող տնային տնտեսությունների թիվը) համայնքի տնային տնտեսությունների թվաքանակում</p>
	<p>I<sub>5</sub>- թռչնազուրկ տնային տնտեսությունների տեսակարար կշիռը (ոչ մի տեսակի թռչուն չունեցող տնային տնտեսությունների թիվը) համայնքի տնային տնտեսությունների թվաքանակում</p>
	<p>I<sub>6</sub>- ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններում ապրող բնակչության տեսակարար կշիռը համայնքում առկա բնակչության թվաքանակում</p>
	<p>I<sub>7</sub>- իրենց տնօրինության տակ գյուղատնտեսական հողերի մինչև 50%-ը մշակել կարողացող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը համայնքի տնային տնտեսությունների թվաքանակում</p>

	<p><math>I_8</math>-իրենց գյուղատնտեսական հողերը ընդհանրապես մշակել չկարողացող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը համայնքի տնային տնտեսությունների թվաքանակում</p>
<p>V-խոցելիության համաթիվ</p>	<p><math>V_1</math>-0-15 տարեկան երեք և ավելի երեխա ունեցող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը համայնքում առկա տնային տնտեսությունների թվաքանակում</p>
	<p><math>V_2</math>-65 և ավելի տարեկան միայնակ կամ մի քանի ծերերից կազմված տնային տնտեսությունների տեսակարար կշիռը համայնքում առկա տնային տնտեսությունների թվաքանակում</p>
	<p><math>V_3</math>-16-64 տարեկան աշխատանքային տարիքի և աշխատունակ տղամարդ չունեցող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը համայնքում առկա տնային տնտեսությունների թվաքանակում</p>
	<p><math>V_4</math>-հաշմանդամ ունեցող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը համայնքում առկա տնային տնտեսությունների թվաքանակում</p>
<p>HP-բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորությունների սահմանափակության և անհասանելիության համաթիվ</p>	<p><math>E</math>-կրթական հնարավորությունների սահմանափակության և անհասանելիության համաթիվ</p>
	<p><math>E_1</math>-կրթական համակարգում համակարգում չընդգրկված 6-14 տարեկան բնակչության տեսակարար կշիռը 6-14 տարեկան բնակչության թվաքանակում</p>
	<p><math>E_2</math>- կրթական ծառայությունների նյութական ու ֆիզիկական անհասանելիության պատճառով կրթական համակարգում չընդգրկված 15-17 տարեկան բնակչության տեսակարար կշիռը 15-17 տարեկան բնակչության տեսակարար կշիռը 15-17 տարեկան բնակչության թվաքանակում</p>
	<p><math>H</math>-առողջապահական հնարավորությունների սահմանափակության և անհասանելիության համաթիվ</p>
	<p><math>H_1</math>- առողջապահական ծառայությունների բացակայություն (համայնքում բուժկետի, ամբուլատորիայի, պոլիկլինիկայի, ընտանեկան բժշկի բացակայություն բացակայություն)</p>
	<p><math>H_2</math>-դեղատան բացակայություն</p>
	<p><math>H_3</math>-տարվա ընթացքում կանխարգելիչ միջոցառումների չենթարկված 0-2 տարեկան երեխաների տեսակարար կշիռը համայնքում</p>

առկա 0-2 տարեկան երեխաների թվաքանակում
S-կենսապայմանների հնարավորությունների սահմանափակության և անհասանելիության համաթիվ
S <sub>1</sub> -ժամանակավոր կացարաններում ապրող տնային տնտեսությունների թիվը համայնքի տնային տնտեսությունների թվաքանակում
S <sub>2</sub> - անվտանգ խմելու ջրի աղբյուրների հասանելիությունից զուրկ տնային տնտեսությունների տեսակարար կշիռը (համայնքում ջուրը բերովի է կամ բնակչությունն օգտվում է մոտակա աղբյուրներից) համայնքի տնային տնտեսությունների թվաքանակում
S <sub>3</sub> -գազաֆիկացում չունեցող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը համայնքի տնային տնտեսությունների թվաքանակում
S <sub>4</sub> -ճանապարհների ինդեքսը համայնքում (համայնքում հողե կամ խճաքարե ծածկույթով ճանապարհների երկարությունը ճանապարհների ընդհանուր երկարության մեջ)
S <sub>5</sub> -ոռոգման համակարգից օգտվելու հնարավորություններից զուրկ տնային տնտեսությունների տեսակարար կշիռը համայնքի տնային տնտեսությունների թվաքանակում

10) Տարածքներում տնտեսական զարգացման մակարդակն առաջարկվում է գնահատել տնտեսական զարգացման վրա առանձին ոլորտներում կատարվող ներդրումների ազդեցության հաշվարկի մեթոդաբանությամբ: Այս մոտեցումը թույլ է տալիս գնահատել տարածքային կտրվածքով համապատասխան ոլորտներում կատարված ներդրումների ազդեցության չափը տարածքներում ստեղծված ավելացված արդյունքի վրա:

11) Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի և տարեկան ներդրումների դինամիկան՝ 2002-2009 թվականներին՝ Աղյուսակ 6:

### Աղյուսակ 6

Տարիներ	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009
<b>ՀՆԱ</b>	418673.8	569837.7	711099.3	954057.3	1251677	1461030.9	1757948	1369581.5
Ներդրում արդյունաբերության ոլորտում	75981.7	111956.8	130263.4	200346.9	218355.6	250170.2	277916.0	155226.1
Ներդրում շինարարության ոլորտում	52751.8	87476.2	120681.3	231024.0	403338.7	421290.3	576884.5	204762.9

Ներդրում գյուղատնտեսության ոլորտում	2331.0	3044.1	3540.9	3841.7	4176.8	4104.7	5059.5	2576.9
Ներդրում ծառայությունների ոլորտում	68107.5	101849.8	132884.4	186007.4	324675.9	376555.8	487764.1	343290.1

Համախառն ներքին արդյունքի և ըստ ոլորտների կատարված ներդրումների միջև կապի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ գործոնների կապը խիստ կորելացված է և կարելի այդ կախվածությունը գնահատել էկոնոմետրիկ մոդելի միջոցով: Ներդրումներ-Համախառն ներքին արդյունք կապը գծային է: Հետևաբար Ներդրումների ազդեցությունը տնտեսական զարգացման վրա առաջարկվում է հաշվարկել բազմագործոն կապի միջոցով, որը կոչվում է բազմակի ռեգրեսիա: Աղյուսակ 6-ում բերված ներդրումների և ՀՆԱ-ի ցուցանիշների միջև կորելյացիոն կապը հավասար է 1-ի, որը վկայում է, որ ցանկացած ոլորտում  $x$  գումարի ներդրում ՀՆԱ-ի աճի վրա ազդում է որևէ  $a$  թվի չափով: Արդյունքում ներդրումների ազդեցության հաշվարկի բազմակի ռեգրեսիայի մոդելի կառուցումն առաջարկվում է իրականացնել բազմագործոն գծային հավասարման միջոցով: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Y = a_0 + a_1x_1 + a_2x_2 + a_3x_3 + a_4x_4$$

որտեղ՝

$Y$ -ՀՆԱ-ի գումարն է

$X_1$ - Ներդրումների գումարն է արդյունաբերության ոլորտում

$X_2$ - Ներդրումների գումարն է շինարարության ոլորտում

$X_3$ - Ներդրումների գումարն է գյուղատնտեսության ոլորտում

$X_4$ - Ներդրումների գումարն է ծառայությունների ոլորտում

Արդյունքում նշված մեթոդաբանությամբ հնարավոր կլինի հաշվարկել յուրաքանչյուր ներդրման ազդեցությունը ՀՆԱ-ի աճի վրա Հայաստանի Հանրապետության և տարածքային կտրվածքներով:

Տնտեսական զարգացման մակարդակի և աղքատության հաշվարկման միջոցով (հաշվարկի հիմքում դնելով կյանքի բարեկեցության, կրթական, առողջապահական որոշակի մակարդակի ապահովումը՝ մարդկային աղքատություն, և գործազրկության նվազումը՝ եկամտային աղքատություն) համայնքների և մարզերի մակարդակով կորոշվեն տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրները:

12) Կհաշվարկվի յուրաքանչյուր հիմնախնդրի լուծման ազդեցությունը համայնքի, մարզի և երկրի տնտեսական զարգացման և աղքատության նվազեցման վրա, որի հիման վրա կսահմանվեն աջակցության չափանիշները և պահանջները:

13) Կմշակվի և կներդրվի համակարգ, որը կապահովվի տարածքային համաչափ զարգացումը, այսինքն՝ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին ցանկացած ներդրում իրականացնելիս հստակ հնարավոր կլինի տեսնել դրա արդյունավետությունը տվյալ տարածքի համար, ինչպիսի զարգացում կապահովվի այդ ներդրումը տվյալ տարածքի համար և երկրի տարածքային զարգացման պատկերը ինչպիսի փոփոխություն կկրի:

14) Տնտեսական զարգացման և մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթվի ցուցանիշների հիման վրա կվերանայվեն մարզային զարգացման ծրագրերը:

15) Հայեցակարգի հիմնադրույթները քննարկվել և հավանության են արժանացել Եվրամիության փորձագետների կողմից: Արդյունքում Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական միության պատվիրակության ղեկավարին սույն Հայեցակարգի դրույթների իրականացման համար ներկայացվել է Եվրամիության փորձագետների հետ մշակված և ուսումնասիրությունների հիմնական արդյունք հանդիսացող <Ճանաչողական կադապարը> (Identification Fiche) տարածաշրջանային զարգացման ոլորտում> փաստաթուղթը: <Ճանաչողական կադապարը> ամբողջապես համընկնում է հայեցակարգում ներկայացվող դրույթների հետ: Փաստաթղթում շեշտադրում է կատարված նաև համայնքների խոշորացման գաղափարի վրա, որպես տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բարեփոխման հիմք: Եվրամիության հետ շարունակական համագործակցության ընթացքում նշված փաստաթուղթը ամբողջական մոտեցում կհանդիսանա համադրելու տարածքային զարգացման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրականացվելիք բարեփոխումը և դոնոր կազմակերպության միջամտությունը:

